

Ռոզա ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

## ԶՐՈՒՅՑՆԵՐ

ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երեւան  
2004

Ճանաչված լրագրող Ռոզա Եղիազարյանի այս գիրքը գրվել է հեղինակի անձնական փորձի եւ արտասահմանյան հայտնի մասնագետների ուսումնասիրությունների հիման վրա:

Գիրքը կարող է իբրեւ ձեռնարկ ծառայել համալսարանների լրագրության ֆակուլտետների համար: Այն օգտակար կլինի նաեւ ոլորտի հետազոտողների, խմբագիրների եւ լրագրողներին:

Սույն հրատարակությունն իրականացրել է Երեւանի մամուլի ակումբը՝ Բաց հասարակության ինստիտուտի ֆինանսական աջակցությամբ:

Թարգմանիչ՝ Ս. Ջաքոյան  
Խմբագիր՝ Մ. Հարությունյան  
Համակարգչային էջադրումը  
եւ ձեւավորումը՝ Ն. Մենդելյանի

Ծրագրի ղեկավար՝ Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

Բաց հասարակության ինստիտուտ

Երեւանի մամուլի ակումբ

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

ՍՈՎՈՐԵՔ ԿՈՂՔԻՑ ԴԻՏԵԼ

ԾԱՂԿԱԶԱՐԴ ԱՂՋԻԿԸ

ԵՂԵՔ ՄԱՐԴԱՄՈՏ,  
ԲԱՅՑ ՈՉ ԱՆՊԱՏԿԱՌ

ՄԻ ԱՆՑԵՔ ՉԱՓԸ

ՈՉ ԲՈԼՈՐՆ ԵՆ ՍԻՐՈՒՄ  
ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՏԱԼ

ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ  
ՃԳՆԱԺԱՄ

ԿՅԱՆՔԸ ՈՉԻՆՉ Է  
ԱՌԱՆՑ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԿԵՂՏՈՏ ՄՊԻՏԱԿԵՂԵՆԸ  
ՊԵՏՔ ՉԷ ՓՈՐՓՐԵԼ

ԱՄԵՆ ՈՔ ՏԵՄՆՈՒՄ Է ԱՅՆ,  
ԻՆՉ ՑԱՆԿԱՆՈՒՄ Է ՏԵՄՆԵԼ

ՍԹՐԵՍ

ՏԵՂԵԿԱՏԿԱԿԱՆ  
ԱՅԱԲԵԿՉՈՒԹՅՈՒՆ

ՀՈՒՄՈՐԸ ԵՎ ԽԱՂԸ՝  
ԻԲՐԵՎ ԼԻՑՔԱԹԱՓՄԱՆ  
ԲԱՂԱԴՐԱՄԱՍԵՐ

ՀԱՄՈՁՎԱ՞Ծ ԵՔ,  
ՈՐ ՁԵՁ ՀԱՍԿԱՆՈՒՄ ԵՆ

Ի ՍԿՁԲԱՆԵ ԷՐ ԲԱՆՆ

ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ԼԵՁՈՒ

ԻՆՉՊԵՍ ՆԱԽԱԳԱՅ ԴԱՌՆԱԼ

ՄԵՐ ԽՈՍՔԻ  
ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

## ՆԱԽԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

1980 թվականին «Հայֆիլմում» նկարահանվում էր Հենրիկ Մալյանի «Կտոր մը երկինք» կինոնկարը: Ըստ սցենարի՝ դրվագներից մեկի գործողությունները ծավալվում էին կանանց բաղնիքում, որտեղ գլխավոր հերոսուհուն՝ ջահել հարսնացուին, հին սովորույթով պետք է լողացնեին՝ թերություններ հայտնաբերելու համար կամ՝ համոզվելու, որ աղջիկն այդպիսիք չունի: Նախատեսվում էր նկարահանումը կատարել շոգու քողով, որի հետեւից միայն աղոտ կարող էին նշմարվել կանացի մերկ սիլուետներ: Սակայն Հայաստանում չգտնվեց մի կին, ով համաձայներ մերկ նկարահանվել: Հարկ եղավ աղջիկներ հրավիրել Լենինգրադից: Թեպետ հետագայում այդ բավականին պարկեշտ դրվագն էլ հանվեց ֆիլմից. գրաքննությունն իր գործն արեց:

Իսկ ի՞նչ կապ ունի այդ համարյա քառորդ դարի վաղեմություն ունեցող փաստը մեր զրույցի՝ լրագրության հոգեբանության հետ, կհարցնեք դուք: Ամենաանմիջական: Պատկերացրեք՝ այսօր է թերթերում հայտարարություն տպագրվում կինոնկարի մի դրվագում մերկ նկարահանվելու համար աղջիկներ ընտրելու մասին: Իսկ հիմա պատկերացրեք, թե այդ հայտարարությունից հետո աղջիկների՝ հայուհիների ինչ հերթ կլինի «Հայֆիլմի» դռների առջև: Կարծում եք պատճառը սոցիալ-տնտեսական դժվարություններն են, որ աղջիկներն էլ են կրում այս կյանքում: Միայն մասամբ: Մերկ մարմինը վաղուց արդեն մեր գիտակցության մեջ չի նույնացվում ինչ-որ արգելված, անպարկեշտ բանի հետ, քանզի ՁԼՄ-ներն ամեն օր ու ժամ մեզ հրամցնում են կանացի սքանչելիքները՝ մեր կամքից ու գիտակցությունից անկախ փոխելով մեր արժեքային պատկերացումները:

Աստվածաշնչյան պատվիրանների փոխարեն մեզ աստիճանաբար մատուցվում են նոր աշխարհի նոր արժեքները. իշխանություն, ուժ, փող, փառք, բռնություն, սեքս: Կարելի է բառերի հերթականությունը փոխել, սակայն դրանից նրանց բացասական ազդեցությունները չեն նվազում:

Մարդու վարքի վրա շատ գործոններ են ազդում. միջավայրը, կրոնը, ազգությունը, սեռը, մասնագիտությունը, կրթությունը, շփման շրջանակը եւ այլն: Ջանգվածային լրատվության միջոցները նույնպես հոգեբանական ազդեցության կարելու գործոն են. կյանքի որոշակի մասը մարդն անց է կացնում հեռուստացույցի էկրանի առջև, թերթ կամ հանդես կարդալով, իսկ ինտերնետի երեւան գալով միջանձնային հարաբերություններն ընդհանրապես անցել են վիրտուալ հարթություն:

Շատ մարդիկ են աշխարհն ընկալում լրագրողի աչքերով, եւ որքան վառ է լրագրողի անհատականությունը, այնքան ավելի շատ է նա ազդում իր լսարանի վրա: Ինչպե՞ս պահպանել սեփական անհատականությունը, ինչպե՞ս կազմակերպել աշխատանքը, ինչպե՞ս ստեղծել սեփական, ուրիշներից տարբեր կերպարը, ինչպե՞ս պաշտպանվել սթրեսներից. այս եւ լրագրության հոգեբանության այլ կողմերի մասին կիմանաք, եթե կարդաք այս գիրքը, որ գրվել է հեղինակի անձնական փորձի եւ արտասահմանյան հայտնի մասնագետների ուսումնասիրությունների հիման վրա:

## ՍՈՎՈՐԵՔ ԿՈՂՔԻՑ ԴԻՏԵԼ

Ընդունված է համարել, թե լրագրողը պետք է ունենա որոշակի հատկանիշներ. շփվելու կամ հաղորդակցվելու ընդունակություն, համառություն, նախաձեռնողականություն, համարձակություն, նորը նկատելու բնագոյ, արագ արձագանքման եւ որոշում կայացնելու հմտություն: Սակայն եթե դուք այս բոլոր հատկանիշներն ունեք, բայց Աստված ձեզ գրելու շնորք չի տվել, ապա ավելի լավ է ձեր բացառիկ ընդունակություններն օգտագործեք այլ բնագավառում: Լրագրության

արտասահմանյան ձեռնարկների հեղինակները, սեփական փորձի հիմա վրա հիշատակում են եւս մի հատկանիշ. դեպքերից մի կողմ քաշվելու ընդունակությունը: Առաջին հայացքից սա կարող է զարմանալի թվալ. ինչպե՞ս կարելի է զբաղվել թեմայով եւ անտարբեր լինել: Թեման պետք է հետաքրքրի, ինչպես ընդունված է ասել՝ կլանի քեզ, բայց ոչ ավելին, որովհետեւ, եթե դուք դրա նկատմամբ անտարբեր չլինեք, անընդհատ մտովի դրան անդրադառնաք, ապա սթրեսն անխուսափելի է:

Բերեն մի օրինակ անձնական փորձից: Տարիներ առաջ ինձ հրավիրեցին Նոր տարին դիմավորելու «Լիտերատուրնայա գազետա» - ի խմբագրությունում: Այդ ժամանակ դա Խորհրդային Միության ամենահեղինակավոր եւ էլիտար թերթն էր, լույս էր տեսնում միլիոնավոր տպաքանակով, եւ այն բաժանորդագրվում էին եթե ոչ ազդեցիկ ծանոթի միջնորդությամբ, ապա՝ իբրեւ վրադիր «Պրավդա» կամ «Տրուդ» բաժանորդագրվելով: Պատկերացրեք, թե ինչպես էի ես՝ երիտասարդ, սկսնակ լրագրողուհիս պատրաստվում հանդիպմանը, չէ՞ որ այնտեղ պետք է լինեին լրագրության այնպիսի հսկաներ, ինչպիսիք էին Արկադի Վակսբերգը, Յուրի Ռոստը, Գենադի Բոչարովը: Նրանք մեզ համար չափանիշ էին: Նրանց հողվածները ողջ երկիրն էր քննարկում: Եվ ես երեկոյան պետք է նրանց շրջապատում լինեմ: Կանխավայելելով առաջիկա երեկոն՝ դուրս էի գալիս Գորկու, այժմյան Տվերսկայա փողոցի հայտնի նվերների խանութի առջևի գետնանցումից: Ես դեռ պետք է հասցնեի վերջին գնումներս կատարել, վազել վարսավիրանոց, էլի ինչ-որ տեղ: Ձյունապատ աստիճաններով իջնում, ոչ՝ բառիս բուն իմաստով ցած էր սահում մի տարեց կին, ձեռքին՝ ձկան պահածոյի տուփերով ու մի սեւ հացով ցանցազամբյուղ: Կինը կիսապառկած-կիսանստած էր աստիճաններին: Նրա կողքով անտարբերությամբ իջնում եւ բարձրանում էին մարդիկ: Ես էլ ժամանակ չունեի, բայց մոտեցա եւ փորձեցի օգնել նրան: Սակայն ուժս չէր պատում նրան բարձրացնել: «Ի՞նչ մարդիկ եք, -գոռացի, -օգնեցեք՝ մարդ է մեռնում»: Ոչ մի արծագանք. բոլորը շտապում էին: Միայն մի երիտասարդ օգնեց ինձ, եւ մենք միասին այդ կնոջը հասցրինք մոտակա դեղատունը: Այնտեղ առաջին օգնություն ցույց տվեցին, «Շտապ օգնություն» կանչեցին: Ես տեսա, թե ինչպես էր այդ կինը նայում վաճառասեղանին դրված թխվածքին եւ հասկացա. նա սոված է: Փորձեցի ակնարկել դեղատան աշխատողին, որ թխվածքը տան այդ տարեց կնոջը: Նույն անտարբերությունը: Նա միայն պատասխանեց, թե «Շտապ օգնությունը» շուտով կգա...

Խուռն մտքերով գնացի «Լիտերատուրնայա գազետայի» խմբագրություն: Իմ սեղանակիցներից մեկը Գենադի Բոչարովն էր: Արտակարգ իրավիճակների, մարդկային բարդ փոխհարաբերությունների մասին նրա հողվածները միշտ էլ հետաքրքրությամբ էին ընթերցվում: Ձրույցի ժամանակ պատմեցի նրան ինձ հետ պատահածը: Նա միայն ուսերը թոթվեց. «Մոսկվան մեծ քաղաք է, եւ ուրիշի հոգսը ոչ մեկի պետքը չէ»: Ես ցնցված էի նրա անտարբերությունից: Եվ միայն տարիներ անց հասկացա, որ դա ոչ թե մարդկային անտարբերություն էր, այլ մասնագիտական ինքնապահովագրում: Եթե լրագրողն իր ուսերին վերցնի աշխարհի բոլոր դժբախտությունները, մարդկային բոլոր հոգսերը, իր հարազատների ու բարեկամների, ինչպես նաեւ անծանոթների ու օտարների բոլոր խնդիրները, ապա մի քանի ամսից կդառնա հոգեբուժարանի հաճախորդ, լավագույն դեպքում՝ սթրեսներ կունենա... մինչ հաջորդ ծայրահեղ իրավիճակը:

Գուցե սրբապղծություն թվա ասածս, սակայն հոգեբանական ինքնապահովագրումը լրագրողին ստիպում է մի կողմ քաշվել. եթե դուք տեսախցիկով, լուսանկարչական ապարատով կամ պարզպես նոթատետրն ու գրիչը ձեռքին հայտնվել եք իրադարձությունների վայրում, ապա պետք է հիշեք, որ դուք առաջին հերթին հանդես եք գալիս իբրեւ տեղեկություններ հավաքող եւ տարածող: Եթե դուք այդ պահին ձեր լրագրողական պարտքը չեք կատարում, ապա ոչ մեկը չի խանգարում գործել իբրեւ քաղաքացի:

Եվ այսպես, լրագրողի գործունեության հոգեբանական առանձնահատկություններից մեկը կատարվող իրադարձություններից մեկուսանալն է:

## ԾԱՂԿԱԶԱՐԴ ԱՂԶԻԿԸ

«Մարդուն դիմավորում են ըստ հագուստի, ճանապարհում՝ ըստ խելքի», - պնդում է ռուսական ասացվածքը: Սակայն հագուստը երբեմն այնքան խոսում է լինում, որ բանը չի հասնում դրա տիրոջ խելքին: Մի անգամ, միացնելով հեռուստացույցը, տեսա մի չափազանց գեղեցիկ աղջկա՝ չափազանց բաց պարանոցին հսկայական մի վարդ: Նրա գեղեցիկ դեմքը հովվերգական փայլ ուներ: «Հավանաբար նորածնության մասին հաղորդում է», -մտածեցի ես: Պատկերացրեք իմ զարմանքը, երբ պարզվեց, որ աղջկա զրուցակիցը դպրոցի տնօրեն էր: Ես քարացա եւ ոչ մի կերպ չէի հասկանում, թե ինչ է մեղմիվ ասում այդ աղջիկն ու ինչ է նրան պատասխանում տնօրենը. ես միայն մտածում էի՝ տեսնես, որտեղի՞ց է գնել հագուստը, ո՞վ է նրա դիմահարդարը, ո՞վ է վարսավիրը: Աղջկա (լեզուս չի պտտվում նրան լրագրող կամ հաղորդավար անվանել)՝ հաղորդմանն անհամապատասխան կերպարը տապալեց լուրջ զրույցը: Համոզված, եմ նույնպիսին էր հեռուստադիտողների մեծ մասի տպավորությունը:

Լրագրողի արտաքինը, շարժումները, ձայնը շատ կարեւոր գործոններ են, որոնք հոգեբանական ազդեցություն են ունենում մի կողմից հարցազրույց տվողի, մյուս կողմից՝ հեռուստադիտողների կամ ռադիոլսողների վրա, եթե խոսքն էլեկտրոնային լրատվամիջոցներում աշխատող լրագրողներին է վերաբերում: Լավ տեսք ունենալու համար բոլորովին էլ պարտադիր չէ գեղեցկուհի լինել կամ շշմեցուցիչ զգեստներ հագնել: Դրա ամենահեշտ ու ուղիղ ճանապարհը հագուստի եւ շարժումների կանոնավորությունն ու համեստությունն են: Եթե ձեր նպատակը հանդիսատեսին ցնցելն է, եթե դուք ինչ-որ ճշան ծրագիր եք վարում, խնդրեմ, հագեք նույնքան ճշան հագուստներ: Սակայն եթե զրուցում եք քաղաքական գործչի հետ եւ լուրջ խնդիրներ եք շոշափում, ապա հագնվեք խիստ եւ առանց հավակնոտության: Սակայն խիստ ու էլեգանտ կոստյումը, ինչպես վարդը՝ հաղորդավարուհու պարանոցին, նույնքան անտեղի է, եթե դուք ռեպորտաժ եք վարում, ասենք, ռազմական գործողությունների վայրից:

Եղեք մաքրասեր. մաքուր պետք է լինեն եւ ատամները, եւ եղունգները, եւ կոշիկները: Ու ոչ մի սուր հոտ: Թանկարժեք ֆրանսիական օժանելիքը, եթե դրանով օծվեք ոտքից-գլուխ, ձեր ալերգիկ զրուցակցին կխրտնեցնի, ինչպես ձեր սիրած բաստուրմայի հոտը: Ոչ մի ալկոհոլ: Անքաղաքավարություն է նաեւ ծխելը, թեպետ մեր հայրենական հեռուստաընկերություններում եւ մի շիշ գինին, եւ ծխախոտը՝ հաղորդման մասնակցի մատների արանքում, հազվադեպ չեն: Եվրոպայում, որին այդքան ձգտում ենք, դուք մնան բան չեք տեսնի:

Լոզանք ընդունելու մասին նոր սերնդին, կարծում եմ, հիշեցնել պետք չէ: Բայց ահա մի պատմություն այդ թեմայով. տարիներ առաջ ես աշխատում էի «Կոմսոմոլեց» թերթում: Խմբագրությունում նոր աշխատակից ընդունեցին՝ բարձրահասակ, բարեկազմ ու գեղեցիկ, մարզիկի արտաքինով մի տղայի: Նրա հայտնվելուց մեկ շաբաթ անց այդ սենյակում տարիներով աշխատած բոլոր աշխատակիցները տեղափոխվեցին այլ սենյակներ: Քանի որ խմբագրությունում աշխատատեղերն այնքան էլ շատ չէին, խմբագրի տեղակալն ինձ խնդրեց տեղափոխվել նորեկի սենյակը: Ես համաձայնեցի: Նորեկը երկու օր գործուղման էր: Երրորդ օրը, հանձնարարությունից վերադառնալով կեսօրից հետո, ես նրան տեղում գտա: Սենյակում նեխած պանրի ծանր հոտ էր կանգնած: Ես հարցրեցի խմբագրի տեղակալին՝ հո պատահաբար առնե՞տ չի սատկել սենյակում (մեր հին շենքում մնան բաներ էլ էին լինում): Տեղակալը շրթունքները ծամածռեց ու ասաց. «Պարզ է, ուրեմն երկտողն էլ չի օգնել»: «Ի՞նչ երկտող», -հարցրեցի ես: «...Որ անհրաժեշտ է ոտքերն ամեն օր լվանալ: Լավ, ես նրան ամեն ինչ հիմա ճակատին կասեմ»: Մի քանի րոպե հետո նա մեր սենյակից վերադարձավ ծիծաղից կարմրած. պարզվեց՝ խմբագրի տեղակալի երկտող-դիտողությունից հետո նորեկը

ուղքերը լվանում էր, բայց... Երբ խմբագրի տեղակալը հարցրել էր. «Իսկ գուլպաներդ ամեն օր փոխո՞ւմ ես», նա պատասխանել էր. «Իսկ դա պարտադի՞ր է»:

Մի ուրիշ՝ ոչ պակաս անեկդոտային պատմություն ավագ սերնդի լրագրողները մինչև հիմա էլ հիշում են: Կանանց հանրահայտ հանդեսի գլխավոր խմբագրից միշտ սխտորի տհաճ հոտ էր գալիս: Եվ մի անգամ, պատմում են, Կարեն Դեմիրճյանը չդիմացավ ու ասաց իրեն հատուկ կտրուկ տոնով. «Գոնե կենտկոմ գալուց առաջ խաշ մի կեր»:

## ԵՂԵՔ ՄԱՐԴԱՄՈՏ, ԲԱՅՑ ՈՉ ԱՆՊԱՏԿԱՌ

Չգիտես ինչու, ոմանք կարծում են, թե առանց որոշ անպատկառության ու աներեսության լրագրող չի լինում: Վստահեցնում են, որ հենց նման լրագրողների առջև են աղբյուրները փակում դռները: Դատեք ինքներդ. ո՞վ կհամաձայնի հանդիպել անպատկառ ու անամոթ մեկի հետ, ինչքան էլ վերջինս գլուխ ջարդի: Նման մարդը, լավագույն դեպքում, կարող է հավակնել որեւէ բուլվարային թերթի սկանդալային նորությունների սյունակում տեղ ունենալու:

Բարեկամներ ձեռք բերեք, եւ դուք միշտ կունենաք ամենաթարմ տեղեկությունները, ամենահետաքրքիր ու սուր սյուժեները, ամենալավ գրուցակիցներն ու ամենալավ տեղերը թատրոններում ու համերգասրահներում: Լրագրության արեւմտյան ձեռնարկները տեղեկություններ հայտնող մարդկանց անվանում են բանավոր աղբյուրներ կամ ինֆորմատորներ: Ցանկացած կազմակերպությունում կան լրագրողին աջակցելու պատրաստ մարդիկ: Ոմանց մղում է հետաքրքրասիրությունը, մյուսները պատրաստ են աջակցել ծառայության բերումով, երրորդները՝ այլ նկատառումներ ունեն: Ձեռք բերելով տեղեկատվության սեփական աղբյուրներ՝ ձգտեք բարեկամանալ նրանց հետ: Այդպիսին է մեր հոգեկերտվածքը. վստահություն կարելի է ձեռք բերել միայն եթե ոչ բարեկամ, ապա գոնե լավ ծանոթ դառնալով: Իմ լավ բարեկամներից մեկը՝ Յայաստանում աշխատած արտասահմանցի մի բարձրաստիճան պաշտոնյա, իր հաջորդի համար պատրաստած ցուցումներում գրել էր, որ Յայաստանում արդյունավետ աշխատել կարելի է բարեկամական կապերի շնորհիվ: Եվ նա իրավացի էր: Բարեկամներ ձեռք բերեք: Մի ծուլացեք՝ զանգահարեք նրանց եթե ոչ ամեն օր, ապա գոնե շաբաթը մեկ անգամ: Յարցրեք ոչ միայն ծառայողական նորությունների մասին, այլև հետաքրքրվեք ընտանիքի անդամների առողջությամբ, առաջնեկի ատամ հանելով եւ այլն: Դա ազդեցություն է ունենում: Եթե ստացել եք ձեզ անհրաժեշտ տեղեկությունները, ապա ունկնդրեք շվեդական լրագրության անվանի ներկայացուցիչ Էրիկ Ֆիլթելիուսի խորհուրդներին.

- Միշտ ձգտեք, որ աղբյուրը հանդես գա բացահայտ:
- Աղբյուրի հետ հստակեցրեք տեղեկություններ տրամադրելու պայմանները:
- Երբեք մի բացահայտեք աղբյուրները:
- Տեղեկատվության աղբյուրների նկատմամբ ունեցեք քննադատական վերաբերմունք

## ՄԻ ԱՆՑԵՔ ՉԱՓԸ

Լրագրողը հաճախ է իր նյութերի հերոսների հետ մեծ-մեծակ մնում: Սկորսեզեի բազմաթիվ կանանցից մեկը՝ Ջուլիա Կամերոնը, պատմում է, որ առաջին անգամ հարցազրույցի համար այցելելով նշանավոր ռեժիսորին, չնկատեց էլ, թե ինչպես օրը երեկոյացավ: Ընդ որում, տանը նաեւ Սկորսեզեի հերթական ընկերուհին էր, որին

Ջուլիան սկզբում սպասուհու տեղ էր դրել, որովհետեւ տանտերը նրա հետ կոպիտ էր վարվում: Նյութի հերոսի հետ անցկացրած երեկոն ավարտվեց ամուսնությամբ, որը, ինչպես եւ Սկորսեզեի նախկին եւ հետագա բոլոր ամուսնությունները, կարճ տեւեց՝ ընդամենը չորս տարի:

Պատրաստվելով հարցազրույցի՝ մի լարվեք, ասես ձեր կյանքի առաջին ժամադրությանն եք գնում, խուսափեք վառ դիմահարդարումից: Ձեր տեսքով կարող եք ակամա (կամ էլ գիտակցաբար) անժանոթ մարդուն դրդել ոչ միայն հաճոյախոսությունների, այլեւ ավելի ճանրակշիռ ակնկալիքների: Առավել եւս, որ նշանավոր մարդիկ տառապում են սեփական անձի հմայչության բարդությամբ եւ պատրաստ են նվաճել առաջին պատահածին: Մի տրվեք ինքնախաբեկանքի. դուք ոչ առաջինն եք, ոչ էլ վերջինը. ձեր խնդիրը ոչ թե կրքեր, այլ ձեզ հետ, հետեւաբար եւ՝ ընթերցողի հետ զրուցելու, արտասովոր մտքեր եւ գաղափարներ հայտնելու ցանկություն արթնացնելն է, ինչին էլ պետք է ձգտեք հնարամիտ հարցումներով:

Եթե առաջին հանդիպման համար ձեզ սրճարան կամ ռեստորան են հրավիրել, մի մտածեք, թե ցանկանում են կաշառել: Դա սովորական բան է՝ ընդունված ամբողջ աշխարհում, դա գործնական ճաշ է: Սակայն եթե ձեր հյուրի հետ նստել եք մինչեւ ուշ երեկո, եւ նա արդեն ձեռքերին ազատություն է տալիս՝ փորձելով գրկել ձեզ, պարտադիր չէ անմիջապես ապտակ հասցնել: Դուք կարող եք միանգամայն հանգիստ մի կողմ տանել նրա ձեռքն ու բացատրել, որ ֆլիրտը ձեր ժառանգական պարտականությունների մեջ չի մտնում: Կարող եք անգամ բացահայտ ասել, որ պատրաստ եք հրաժարվել նյութը հրապարակելուց: Սակայն, ընդամեն, ինքնաքննադատաբար նայեք երեւոյթին, մտածեք, արդյոք ինքնե՞րդ չեք ձեր վարքով նրան մղել նման վերաբերմունքի, չե՞ որ զրույցը վաղուց ավարտվել է, սակայն դուք դեռ չեք էլ պատրաստվում հեռանալ: Անմիջական եղեք, բնական, սակայն պահպանեք չափը, անգամ եթե զրուցակցի հետ ընկերական հարաբերություններ ունեք:

Հայկական հեռուստատեսության հաղորդավարուհիներից մեկը, հյուրընկալելով նշանավոր անձանց, այնպես շողոմ է ժպտում, սեթեւեթում աչքերով, խոսում քաղցր-մեղր ձայնով, ասես նպատակը ոչ թե զրուցակցին հանդիսատեսի համար խոսեցնելն է, այլ իր համար «բոյ-ֆրենդ» «կպցնելը»: Որոշ հյուրեր դրանից լավ են զգում եւ սկսում են խոստովանել, որ սիրահարված են այդ հաղորդավարուհուն արդեն քսան տարի... Դա հաճելի է, գուցե, սակայն հեռուստադիտողի մե՞ղքը որն է, որ ստիպված է դիտել ու ունկնդրել... Հանդիսատեսին տեղեկություններ են հարկավոր եւ ոչ թե հորթային հրճվանք, որը կարելի էր արտահայտել հաղորդումից առաջ կամ հետո:

Խուսափեք շողոմ ու հուզաթաթախ զրույցներից: Մի վախեցեք կնճռոտ հարցեր տալուց: Հեռուստատեսային մի հաղորդում կար՝ մեր քաղաքական գործիչների կանայք, խոհանոցային սեղանի առջեւ, հերթական աղցանը պատրաստելով, դիֆերամբներ էին երգում իրենց անուսիներին հասցեին՝ ձայնակցելով հաղորդավարուհուն. ախ ինչ լավն էին նրանց անուսիները, միակ թերությունը նրանց չափազանց բարությունն է: Իսկ եթե, Աստված չանի, իրենց միջեւ «սեւ կատու անցնի», ապա ընտանեկան անդորրը գնահատող կինը պարզապես սուրճ կմատուցի նրան, եւ ամեն ինչ կխաղաղվի: Ո՞ւմ են պետք ընտանեկան հովվերգության նման լղոզված տեսարանները: Արդյո՞ք հեռուստադիտողին, որը լավ գիտի, որ այդ «իդեալական» անուսինը ջահել սիրուհի ունի, իսկ մյուս «իդեալականը» գիշերներ է լուսացնում խաղատներում: Եթե հաղորդավարը, ինչպես եւ հեռուստադիտողը, լսել է նման տեղեկություններ, ապա պետք է փորձի հարցնել.

- Իսկ ի՞նչ խաղեր է սիրում ձեր անուսինը:
- Կներե՞ք ամուսնու դավաճանությունը. այդ դեպքո՞ւմ էլ մի գավաթ սուրճը կլուծի ընտանեկան խնդիրները:

Խուսափեք զրուցել այնպիսի պատահական մարդկանց հետ, ովքեր քաղաքականություն, արվեստ, գրականություն են թափանցել կասկածելի



ճանապարհներով: Եթե, այսուհանդերձ, հարկ է լինում գործ ունենալ նման մարդկանց հետ, ավելի լավ է օգտագործել «առճակատում» հարցազրույցի ձևը: Այսինքն, կարող եք այնպիսի հարցեր տալ, որոնք կքողազերծեն ձեր հյուրի տիպի արարքները: Նման հարցազրույցից առաջ նախապես չեն առաջարկում ծանոթանալ հարցերին, փորձնական տեսագրություն չեն կատարում: Նման զրույցի տեմպը հարձակողական է, դինամիկ, որպեսզի զրուցակիցը չհասցնի հավաքել ինքն իրեն: Ցանկալի է զրույցը սկսել չեզոք հարցից, ապա անցնել հարձակման: Ցավոք, մեր հեռուստատեսություններում նման հարցազրույցները ոչ թե հազվադեպ են, այլ ընդհանրապես չեն լինում: Մեզանում ընդունված է վարել միայն «կոմպլեմենտար» զրույցներ, լավագույն դեպքում՝ հղկված հեռուստաբանավեճեր: Սովորաբար «առճակատում» հարցազրույցը վարում են ուղիղ եթերով, այդ պատճառով ամենասուր եւ դժվարամարս հարցը, ցանկալի է, թողնել վերջում: Եթե դուք այն տաք սկզբում, զրուցակիցը կարող է պարզապես հեռանալ տաղավարից:

Հարցերը կարող են առավելագույնս անողոք լինել, սակայն դրանք պետք է տալ ոչ թե ագրեսիվ տոնով, այլ հանգիստ ու մեղմ ձայնով.

- Հաճախ եք չարաշահում պաշտոնական դիրքը:
- Դուք այցելում եք զվարճանքի վայրեր:
- Ո՞վ է ձեզ ուղեկցում այդպիսի այցելությունների ժամանակ:
- Ձեր տղան շրջապատում պրոբլեմներ է ունեցել:

Նեղմ ընկած զրուցակիցը կարող է դիմել «Չեքերի» մեթոդին: Այս մեթոդի մասին մեջբերենք ըստ նույն էրիկ Ֆիլիպելիուսի գրքի.

«Այս մեթոդն առաջին անգամ կիրառել է Ռիչարդ Նիքսոնը՝ 1952 թվականի նախընտրական արշավի ժամանակ: Հենց այդ ժամանակ էր սենատոր Նիքսոնը առաջադրվել իբրեւ ԱՄՆ-ի փոխնախագահի թեկնածու: Նիքսոնին մեղադրում էին, թե կաշառքներ է վերցրել նախընտրական արշավի ժամանակ: Ամեն կողմից իրեն ուղղված հարձակումներից պաշտպանվելու համար Նիքսոնը որոշեց հանդես գալ ճառով, որը քաղաքական պայքարի ողջ պատմության ընթացքում առաջին անգամ հեռարձակվում էր ուղիղ եթերով: Նիքսոնը, վշտահար դեմքով իր հայացքը հառելով ուղիղ խցիկին, հայտարարեց, թե պատրաստ է ամերիկյան ժողովրդին հաշվետվություն տալ իր վաստակած եւ օգտագործած յուրաքանչյուր ցենթի համար: Իր խեղճ կինը հնարավորություն չուներ ջրաքիսի մորթուց մուշտակ գնելու եւ ստիպված էր բավարարվել «պատվարժան հանրապետականի վերարկուով»: Այդ ամբողջ պատմությունը, պնդում էր Նիքսոնը, չարամիտ լիբերալների անվերջ հարձակումների հետեւանք է: Վերջիններս այնքան հեռու են գնացել, որ իրեն մեղադրել են, թե նվեր (ասել է, թե՝ կաշառք) է ստացել Չեքեր անունով կոկեր-սպանիել ցեղի շուն:

- Սակայն նրանք թող ասեն ինչ խելքներին փչի, միեւնույն է՝ մենք շունը մեզ ենք թողնելու, - հանդիսավոր հայտարարեց Նիքսոնը եւ շահեց հեռուստադիտողների համակրանքը՝ խցիկի առջեւ ներկայանալով սիրող ամուսնու եւ կենդանիների բարեկամի կերպարով»:

Մեր քաղաքական գործիչները հաճախ են օգտվում «Չեքերի» մեթոդից, երբ նրանց տրվում են կոշտ կամ մերկացնող հարցեր: Ի՞նչ անել նման դեպքերում: Ամենից ճիշտը կլինի չենթարկվել սադրանքին եւ կտրուկ փոխել զրույցի ընթացքը՝ փորձելով նոր հարցով ապացուցել պատասխանի կեղծ լինելը: Բարեհամբույր տոնով կարող եք ջարդուփշուր անել անմեղ տեղը մեղադրվողի նրա կերպարը, իսկ ճշտող հարցը կօգնի խուսափել նրա կողմից տրվելիք վերացական պատասխանից: Լրագրողի ագրեսիվությունը ընթերցողի կամ ունկնդրի մոտ կարող է միայն հակակրանք առաջացնել: Իսկ հանգիստ տոնով հարցերը, ինչպես նաեւ վստահությունը, որ դուք տիրապետում եք նյութին եւ ավելին գիտեք, քան հարցնում եք, մերկապարանոց մեղադրանքներից ավելի արդյունավետ են լինում:

«Չեքերի» մեթոդը հաճախ է օգտագործվում մամուլի ասուլիսների ժամանակ, երբ լրագրողներն իրար ընդհատելով հարցեր են տալիս: Ի դեպ, մամուլի ասուլիսների ժամանակ բոլոր լրագրողները չէ, որ իրենց հարցերի պատասխանները ստանում են, ավելին՝ դժվարանում են որսալ հարց տալու պահը: Դրա համար կարելի է մի քանի հնարքներ օգտագործել: Եթե դուք զրուցակիցներին մոտ եք նստած եւ գիտեք, թե կոնկրետ ում եք ուզում ուղղել ձեր հարցը, պարզպես որսացեք նրա հայացքը եւ գլխով կամ ձեռքով նշան արեք. նա ինքը ձեզ կխնդրի հարց տալ: Մյուս հնարքը, որ պայթող ռումբի տպավորություն է ունենում հետեւյալն է. եթե մամուլի ասուլիսի ժամանակ մի ակնթարթ լռություն է տիրում, արագ ոտքի կանգնեք եւ բարձր ձայնով հնչեցրեք ձեր հարցը:

## ՈՉ ԲՈՒՆՈՐՆ ԵՆ ՍԻՐՈՒՄ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՏԱԼ

Ոչ բոլորն են սիրում հարցազրույց տալ: Եվ հաճախ հարկ է գտնել զրուցակցին խոսեցնելու հնարը: Երբեմն նման հնար կարող է լինել անգամ... լռությունը: Ալան Ռոզենթալն իր «Կինո եւ տեսաֆիլմերի ստեղծումն իբրեւ հրապուրիչ բիզնես» գրքում (այն ԱՄՆ-ի եւ Մեծ Բրիտանիայի համալսարանների բազային ձեռնարկ է դարձել) բերում է մի քանի հնարքներ, որոնք կարող է օգտագործել լրագրողը նկարահանումների ժամանակ: Արդյունավետ եւ ազդեցիկ հնարքներից մեկը նա համարում է լռությունը: Դրանից շատ է օգտվում անգլիացի Ռեքս Բլյունշթեյնը, ով բանտային կյանքի մասին ֆիլմեր է նկարահանում: Նա ստիպում է մարդասպաններին, բանդիտներին պատմել ցնցող պատմություններ, ընդամենը՝ ինքը ոչ մի հարց չի տալիս: Լռում է նաեւ ամերիկուհի Քեյթ Դեւիսը, խոսում են նրա հերոսները, եւ վերջիններիս զրույցները նման են մենախոսության: Մի վախեցեք սովորում հայտնվելուց, գլխավորը զրուցակցին բացվելու հնարավորություն տալն է:

Տեսախցիկի առջեւ մարդիկ տարբեր կերպ են իրենց պահում: Ոմանք կաշկանդված են, անբնական, ոմանք անսպասելի հատկություններ են բացահայտում, եւ եթե այս դեպքում զրուցակցի խոսքը շեղվում է ձեր նախատեսած սցենարից, ոչինչ, զարգացրեք այդ նոր թեման, հընթացս դուք էլ հարմարվեք դրան, գլխավորն է, որ հեռուստադիտողի կամ ունկնդրի համար հետաքրքիր հաղորդում ստացվի: Սովորաբար հետաքրքիր զրուցակիցների պարագայում հենց այդպես էլ ստացվում է: Եվ ինչ հարցազրույց էլ վարեք, վերջում անպայման հարցրեք զրուցակցին, թե ինչ-որ բան, արդյոք, չմնա՞ց կադրից դուրս, կա՞ այնպիսի հարց, որ նա կցանկանար տային իրեն: Եթե հարցազրույցը տեսա կամ ձայնագրվում է, սակայն ձեզ թվում է, թե ինչ-որ հարցի պատասխան անհետաքրքիր ու ձանձրալի ստացվեց, նորից տվեք հարցը այլ ձեւակերպմամբ, ավելի հետաքրքիր պատասխանի մղեք զրուցակցին: Մի վախեցեք կրկնօրինակներից:

Որոշ մարդիկ, ձայնագրիչը տեսնելով, սկսում են ճապաղ լեզվով խոսել: Միշտ ձեզ հետ գրիչ ու նոթատետր ունեցեք, ասեք զրուցակցին, որ ձայնագրիչը միայն ապահովագրության համար է, որ դուք գրի եք առնում նրա մտքերը, եթե ինչ-որ բան չեք հասցրել գրի առնել, նորից հարցրեք եւ կտեսնեք, թե ինչպես ձեր զրուցակցի լարվածությունը կթուլանա եւ նա կսկսի բնական խոսել: Սակայն սա չի նշանակում, թե նա պետք է ձեզ թելադրի ամեն մի բառը. սովորեք համառոտագրել, հորինեք համառոտագրության սեփական համակարգ, եթե սղագրությանը չեք տիրապետում:

Տվեք ուղիղ եւ պարզ, բայց ոչ պարզունակ հարցեր:

Խուսափեք այնպիսի հարցերից, որոնց կարելի է տալ միանշանակ «այո» կամ «ոչ» պատասխաններ:

Աշխատեք խուսափել ենթադրական հարցերից. «Իսկ ի՞նչ կանեիք դուք, եթե...»: Չէ՞ որ դժվար է ասել, թե ինչպես կվարվի մարդը դեռեւս տեղի չունեցած իրավիճակում:

Խուսափեք նաեւ «Դուք կարո՞ղ եք երաշխավորել այս կամ այն բանը» հարցից: Չէ՞ որ ասված է. «Մարդը որոշում է, Աստված տնօրինում»:

Բերենք այն «արգելված» հարցերի ցանկը, որ կազմել է կանադացի Ջոն Սավոտսկին՝ անվանելով դրանք հարցազրույց վարող լրագրողի տասը «մահացու մեղքեր».

Միանաշանակ պատասխաններ («այո», «ոչ»)

Ենթադրող հարցեր

Հարցականի փոխարեն հաստատական նախադասություն

Համատեղ երկու հարց

Ծանրաբեռնված հարցեր

Պատասխանը հուշող հարցեր

Հարցի մեջ մեկնաբանությունների եւ սեփական

գնահատականների առկայություն

Հարցի մեջ ենթադրությունների եւ հերյուրանքների

առկայություն

Հարցի մեջ պիտակների առկայություն

Հարցի մեջ չափազանցությունների առկայություն

Դժվար ըմբռնելի հարցեր

Յուրաքանչյուր հարց պետք է վերաբերի խնդրի միայն մի կողմին: Երբ մեկ հարցը երկու հարց է պարունակում, պատասխանողը կարող է խուսափել դրանցից մեկից՝ անհարմարից եւ պատասխանել միայն մեկին: Նման բաներ հաճախ են լինում հատկապես մամուլի ասուլիսների ժամանակ:

Շատ հաճախ ամենահետաքրքիր պատասխանները կարելի է ստանալ՝ տալով պարզագույն հարցեր.

- Ի՞նչ եք զգում:

- Ի՞նչ նկատի ունեք:

- Ինչպե՞ս դա պատահեց:

- Որտե՞ղ էիք դուք այդ պահին:

- Ի՞նչ եք պատրաստվում անել:

Փորձեք նախապատրաստած հարցերը տալ ինքներդ ձեզ կամ գործընկերներին: Քաղաքական գործիչները հաճախ մամուլի ասուլիսներից առաջ նախապատրաստում ու փորձում են իրենց պատասխանները, մանավանդ՝ եթե հարցերը նախօրոք տրամադրվել են նրանց: Կամ էլ՝ պատրաստում են ունիվերսալ պատասխաններ, որոնք ոչ մի կապ չունեն տրվելիք հարցերի հետ: Լրագրողների միջին ու ավագ սերունդը հիշում է, երեւի, թե ինչպես էր պատասխանում հարցերին Գորբաչովը՝ երկար, խճճված ու առանց որոշակիության: Նման մարդկանց պատասխաններն ընդհատեք հստակ, ուղղակի հարցով: Եթե ձեզ դարձյալ ուզում են «ֆռռացնել», առանց ամաչելու եւ ուշադրություն չդարձնելով զրուցակցի պաշտոնին՝ խնդրեք հստակ պատասխանել:

Դուք կարող եք հրաշալի հարցեր նախապատրաստել, դրանք անգիր անել, սակայն այնքան տարվել հարցերն արագ տալով, որ անուշադրության մատնեք զրուցակցի պատասխանները: Այդ դեպքում ձեր զրույցը կնմանվի մեկ դարպասի վրա խաղի: Իսկ եթե դուք ընդունակ եք ուշադիր լսել ձեր զրուցակցին, ապա զրույցը կարող է անսպասելի ընթացք ստանալ, դառնալ ավելի հետաքրքիր: Լավ լրագրողը՝ հանպատրաստից ստեղծագործողն է:

Ջրուցակցի վրա հոգեբանական ազդեցություն են ունենում ոչ միայն լրագրողի հարցերը, տոնը, շարժումները, այլեւ զրուցակիցների դիրքը: Շատ մոտ մի նստեք. ոչ միայն այն պատճառով, որ դա (հեռուստահարցազրույցի դեպքում) ջարդում է կադրը, այլեւ՝ որովհետեւ խանգարում է ձեր հյուրին անկաշկանդ լինել, կենտրոնանալ եւ հանգիստ պատասխանել հարցերին: Սակայն շատ հեռու նստելն էլ լարվածություն է առաջացնում: Հանդիպումից առաջ գործընկերներից մեկի հետ փորձեր արեք. ինչպես

կնստեցնեք հյուրերին, ինքներդ նստեք նրա տեղը, եւ եթե ձեզ հարմար է, նշանակում է հյուրին էլ հարմար կլինի: Մի օգտագործեք առանց թիկնակի, երկար ոտքերով աթոռներ, դրանց վրա նստելը անհարմար է, եւ զրուցակցի ուշադրությունն էլ ավելի շուտ կկենտրոնանա աթոռից չընկնելու, քան հետաքրքիր պատասխանելու վրա: Սովորեք նայել զրուցակցի աչքերին, որպեսզի նա էլ ձեզ նայի, այլ ոչ թե հայացքն այս ու այն կողմ տանի կամ փախցնի խցիկից: Ջրույցը սկսելուց առաջ զրուցակցին բացատրեք, թե ինչպես իրեն պահի խցիկի առաջ եւ որ կողմ նայի: Եթե ձեր զրուցակիցն արդեն փորձ ունի եւ գիտի, թե իրեն որ ռակուրսով է հարմար նկարել, կատարեք նրա ցանկությունը, այլապես նա հարցազրույցի ամբողջ ընթացքում պիտի մտածի միայն, թե ձախից նկարելուց իր առանց այն էլ մեծ քիթը կնմանվի Բուրատինոյի քթին: Եթե նկատել եք, մեր քաղաքական գործիչներից եւ բարձր պաշտոնյաներից յուրաքանչյուր երկրորդը էկրանին նմանվում է որեւէ հեքիաթի հերոսի. մեկը նման է Քաջ Նազարին, երկրորդը՝ Չերուրաշկային, երրորդը՝ Անմահ Կաշչեին: Մինչդեռ կյանքում նրանք միանգամայն նորմալ եւ հմայիչ անձնավորություններ են: Ձգտեք էկրանին էլ նրանց ցույց տալ շահեկան կերպով, եթե անգամ դրա համար հարկ լինի հաղթահարել մեն-մի ռակուրսով եւ լուսավորությամբ նկարահանելու սովոր օպերատորի եւ ռեժիսորի դիմադրությունը:

Պաշտոնյաների հետ զրուցելիս խուսափեք ինչպես շողոքորթությունից, այնպես էլ կեղծավորությունից: Շատ ղեկավարներ սիրում են իրենց աշխատասենյակում նստել բարձր բազկաթոռին, իսկ լրագրողին նստեցնել ավելի ցածր մի աթոռի՝ կարծես ընդգծելու համար, թե ով՝ ով է: Անհարմար մի զգացեք՝ խնդրեք թույլ տալ այլ աթոռի կամ բազմոցին նստել, բացատրեք, որ այդպես ձեզ ավելի հարմար կլինի աշխատել: Այդպիսով կհաղթահարեք այն խոչընդոտը, որ միտումնավոր կամ ակամա փորձում էին ստեղծել:

Եթե թերթի լրագրողը կարող է զրույցի ժամանակ գլխով անել, հաստատական կամ անհողաբաշխ բացականչություններ արձակել, հռիռալ, ապա ռադիոլրագրողը, առավել եւս՝ հեռուստալրագրողը կամ հաղորդավարը պետք է իմանան. հեռուստալրագրողի գլխի շաժումները զայրացնում են ակնդիրներին, ռադիոլրագրողը կարող է գլխով անել կամ խրախուսական ժպտալ, սակայն երբեք չպետք է բացականչություններով կամ ծիծաղով մեջ ընկնի: Հարցի պատասխանը նա պետք է լսի լուռ՝ զրուցակցին չընդհատելով բառի կեսից: Իսկ եթե ձեր զրուցակիցը տարվել է խոսելով, որսացեք շունչ առնելու պահն ու ընդհատեք նրան:

Եվ էլի մի բան. խուսափեք «ես» դերանունից: Ձեր խնդիրը զրուցակցին բացահայտելն է եւ ոչ թե ձեր սեփական մտավոր ընդունակությունները ցուցադրելը:

## ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԵԳՆԱԺԱՍ

Խուսափեք մեծածավալ նյութերից, եթե ցանկանում եք գրավել ընթերցողի, ունկնդրի կամ ակնդրի ուշադրությունը: Թերթերի խմբագիրները, ինչպես եւ ընթերցողները տանել չեն կարողնում մեծածավալ նյութերը: Մինչդեռ լրագրողները պաշտում են դրանք, նրանց թվում է, թե ինչքան մեծ է շարադրանքը, նյութն այնքան լավն է: Եվ եթե թերթում մեծ ծավալի հարցը լուծելը հեշտ է՝ այն պարզապես կարելի է կրճատել, ապա ռադիոյում միայն մոնտաժով հարցը չի լուծվում: Պետք է իմանալ մի քանի կանոններ, որոնց կիրառմամբ հնարավոր կլինի ունկնդրի ուշադրությունը ոչ թե շեղել, այլ կենտրոնացնել նյութի վրա: Դրանցից մեկն է՝ տպագիր 8-12 տողանոց նյութում չպետք է հնչեն իրար հետ տրամաբանական կապ չունեցող եւ չհամեմատվող երեքից ավելի թվեր:

Բացի այդ, նյութում պետք է կրկնվեն այն առանցքային տարրերը, որոնք անհրաժեշտ են, որ ունկնդիրը հասկանա բովանդակությունը, ինչպես նաեւ՝ անձանոթ անունները, անձնանունները, տերմինները, բարդ հասկացությունները: Մի վախեցեք դրանք բացատրել հասկանալի լեզվով, որպեսզի ունկնդիրն ըմբռնի նյութի բովանդակությունը:

Ընդհանրապես մի վախեցեք շարադրանքի պարզությունից: Իմաստակությունը իմաստնության նշան է:

Ուղիղ եթերով մարդիկ խոսում են առանց մտածելու, նրանց խոսքն ինքնաբերաբար է կառուցվում եւ լավ է ընկալվում: Այնինչ տեքստի ընթերցումն ավելի դժվար է ընկալվում, քան կենդանի խոսքը կամ երկխոսությունը: Այս պատճառով անհրաժեշտ է զրավոր տեքստը ենթարկել հատուկ մշակման: Սակայն ամենահետաքրքիր զրույցը կամ հաղորդումն անգամ չի կարող սկզբից մինչեւ վերջ միատեսակ ուշադրությամբ ունկնդրվել: Եթե նկատել եք, նույնիսկ ամենասովորական զրույցի ժամանակ մենք կարծես մի պահ վերանում ենք, բաց ենք թողնում խոսակցության որոշ հատվածներ, նորից վերադառնում ենք սկզբին, կրկին նույն հարցն ենք տալիս, եթե իհարկե զրույցը հետաքրքիր է մեզ համար: Եվ խնդիրը բնավ էլ մեր ցրվածությունը չէ, այլ այն, որ լսելու ընթացքում ուշադրության ճգնաժամ է առաջանում: Այդպես է նաեւ ռադիոհաղորդում ունկնդրելիս: Հետազոտողները նկատել են, որ ուշադրության ճգնաժամը ռադիոլսարանի բոլոր ունկնդիրների մոտ համարյա միաժամանակ է առաջանում: Եթե հաղորդման նկատմամբ լրացուցիչ տեղեկատվական հետաքրքրություն (օրինակ՝ արտակարգ իրավիճակի մասին տվյալներ) չկա, ապա երեքուկես րոպե հետո գործնականում բոլոր ռադիոլսողների մոտ սկսվում է ուշադրության առաջին ճգնաժամը եւ նրանք պարզապես «անջատվում են»: Ուշադրություն դարձրեք, երբ դուք ռադիո եք լսում կամ հեռուստացույց դիտում ինչ-որ մեկի հետ, սովորաբար եւ դուք, եւ նա համարյա միաժամանակ բաց եք թողնում տեքստի ինչ-որ մաս եւ իրար հարցնում եք. «Ի՞նչ ասաց...»: Եվ համարյա միշտ պատասխանը լինում է. «Ես էլ չլսեցի...»: Եվ պատճառն այն չէ, որ երկուսդ միաժամանակ շեղվեցիք, այլ՝ որ երկուսիդ մոտ էլ միաժամանակ ուշադրության ճգնաժամ է սկսվել:

Ուշադրության երկրորդ ճգնաժամը՝ հաղորդումը սկսվելուց ութուկես-ինը րոպե հետո է սկսվում: Այն հաղթահարելու համար կարելի է օգտագործել շփման ուղղակի ձեւեր՝ երկխոսություն, բնական խոսքի վավերագրական ձայնագրություն:

Ուշադրության երրորդ ճգնաժամը սկսվում է ունկնդրման 14-րդ րոպեին: Այն կարելի է հաղթահարել միայն բուռն զգացմունքայնություն՝ վրդովմունք, հիացմունք (եթե բանավեճ է ինչ-որ խնդրի շուրջ) արտահայտելու միջոցով: Կարելի է նաեւ հաղորդում ներմուծել երաժշտություն կամ մտածել հաղորդման միապաղաղ ընթացքն ընդհատող այլ հնարք:

Եվ վերջապես՝ ուշադրության ամենաուժեղ ճգնաժամը բաժին է ընկնում հաղորդման քսանութերորդ րոպեին, երբ ունկնդիրն արդեն ընդունակ չէ ընկալելու որեւէ տեղեկություն: Ուրեմն, նյութ պատրաստելով ռադիոյի, հեռուստատեսության եւ թերթի համար, հիշեք թեւավոր խոսքը. «Կարճառոտությունը տաղանդի քույրն է»:

Գոյություն ունեն նյութի մատուցման հատուկ միջազգային չափանիշներ, որոնք հաշվի են առնում լսարանի հոգեբանական առանձնահատկությունները:

Հեռուստառադիոնորությունների մատուցման համար այդ չափանիշները նշում են 100 վայրկյանը: Երեք րոպեում կարելի պատմել ընթացիկ իրադարձության մասին, մեկնաբանել ցանկացած նորություն: 10 րոպեում կարելի է ներկայացնել ծավալուն թղթակցությունը: Վերլուծական հաղորդումների, թերթերի տեսության, հասարակական-քաղաքական եւ այլ լուրջ հաղորդումների համար հարմար է 14-15 րոպե: 28 եւ ավելի րոպեն խորհուրդ է տրվում հեռուստաֆիլմի կամ ռադիոներկայացման համար: Սակայն ցանկացած դեպքում պետք է մտածել ունկնդրի եւ ակնդրի մասին:

## **ԿՅԱՆՔԸ ՈՉԻՆՉ Է ԱՌԱՆՑ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

Դուք նկատե՞լ եք, որ առավոտյան կամ երեկոյան ձեր ձեռքն ինքնաբերաբար մեկնվում է հեռակառավարման վահանակին հենց այն պահին, երբ այս կամ այն ալիքով

նորություններ են հաղորդում: Այո, հենց նորությունները եւ ոչ թե հերթական թրիլերը կամ սպորտային հաղորդումներն են էկրանի առջեւ հավաքում ամենաշատ հեռուստադիտողների: Նորությունները լինում են կարելոր եւ ոչ այնքան կարելոր, այսինքն՝ երկրորդական: Հա, չմոռանանք ասել, որ հայկական հեռուստատեսությունը ստեղծել է նաեւ նորությունների երրորդ տեսակը՝ հաղորդումներ զանազան կազմակերպությունների ու կուսակցությունների այնպիսի կլոր սեղանների եւ ճեպագրույցների մասին, որոնց մասնակցում է մեկուկես մարդ եւ որեւէ մեկը որեւէ հետաքրքիր տեղեկություն չի տալիս: Չգիտես ինչու մեր հեռուստաընկերությունները չեն հրաժարվում նման կեղծ լուրերից եւ տարիներ շարունակ դրանք հրամցնում են հեռուստադիտողներին: Հավանաբար պատճառն այն է, որ ոչ բոլոր լրագրողները գիտեն, թե ինչ է նորությունը:

Սկսենք կարելոր նորությունից (լուրից): Նշանակալի լուրը վերջին 24 ժամում տեղի ունեցած ցանկացած այն իրադարձության մասին հաղորդումն է, որը կարող է շոշափելի հետեւանքներ ունենալ: Ընդսմին, կարելոր չէ, որ լուրը լինի «առաջին թարմության», գլխավորն է, որ այն բացահայտի անհայտ փաստեր կամ այլ իրադարձությունների հետ կապը:

Աբրահամ Լինկոլնի դեպրեսիան, նախագահ Ռուզվելտի արտամուսնական կապը, մարշալ ժուկովի գերմանական հավաքածուն, Սոբչակի գործը (երբ Ելցինն իմանալով, որ նա մեքենայությունների մեջ է ներքաշված, Նեմցովի խնդրանքով թույլ տվեց Փարիզ գնալ), եւ նման այլ իրադարձություններ կատարվել են տարիներ կամ անգամ դարեր առաջ, սակայն մատուցվելով առաջին անգամ, դրանք դառնում են կարելոր նորություններ:

Ի տարբերություն կարելոր նորությունների, լինում են պարզ մարդկային պատմություններ, որ կարող են հուզել մեզանից յուրաքանչյուրին: Հայկական հեռուստաընկերություններից մեկը ցուցադրեց հուզիչ սյուժե մի կնոջ մասին, ով գեղեցիկ ծաղկեփնջեր էր հյուսում... մազերից: Մեկ ուրիշի ուշադրությունը կարող է գրավել այն ամերիկացին, ով իր մեքենան ծաղկանոց էր դարձրել, երրորդին՝ կիետաքրքրի մագիստրոսի կոչումով այն կինը, ով հասարակաց տուն է բացել: Նման սյուժեները ցուցադրում են, երբ բացակայում են հրատապ լուրերը:

Ինչպե՞ս տարբերել կարելոր կամ նշանակալի իրադարձությունները երկրորդականներից: Նշանակալի իրադարձությունն ունի հինգ հիմնական բաղկացուցիչ, թեպետ միշտ չէ, որ այդ հինգը միաժամանակ առկա կլինեն, սակայն երկու-երեքի առկայությունը պարտադիր է: Ինչքան այդ բաղկացուցիչները շատ են, այնքան իրադարձությունը ՁԼՄ-ների համար ավելի կարելոր է դառնում:

I. Յուրաքանչյուր կարելոր նորություն պետք է ունենա գլխավոր հերոս: Նման կերպարը դիտողին, ունկնդրին ընթերցողին ինքն իրեն այդ կերպարին նույնացնելու, բարդ ու հաճախ հակասական տեղեկատվությունն ընկալելու հնարավորություն է ընձեռում: Սակայն նման մոտեցումն ունի նաեւ իր բացասական կողմերը. ուշադրությունը կենտրոնանում է բացառապես հերոսի (ասենք՝ Հռոմի Պապի, նախագահի, ՁԼՄ-ներն իր նպատակներին ծառայեցնելու ձգտող ահաբեկչի եւ այլն) վրա:

II. Նշանակալի իրադարձությունը պետք է պարունակի դրամատիզմ, շահերի բախում, անգամ... բռնություն: Հաճախ բռնության, հակասությունների տարրեր չպարունակող տեղեկատվությունը (երրորդ աշխարհի երկրների պարտքերը, վարկավորման տոկոսների բարձրացումը եւ այլն) անտեսվում են արեւմտյան ՁԼՄ-ների կողմից:

III. Նշանակալի իրադարձությունը պետք է պարունակի ակտիվ գործողություն: Դա կախանի թելիկ է, որի վրա շարուն են ավելի վերացական տեղեկությունները: Օրինակ, սղաճի մասին հաղորդագրությունը կարող է ուղեկցվել ապրանքների գների բարձրացման, սպառողական պահանջարկի աճի մասին ռեպորտաժով: Երրորդ աշխարհի երկրներում վերջին 50 տարում կտրուկ նվազել է գյուղմթերքների արտադրությունը, մեծացել է ներմուծումը: Սա համաշխարհային հանրության համար խիստ կարելոր տեղեկություն է, սակայն արեւմտյան լրագրողները չեն կարողանում

գտնել որեւէ կոնկրետ իրադարձություն, որում այս թեման հստակ արտահայտություն ունենա:

IV. Նորույթ եւ հանընդհանուր նորմերից շեղման աստիճան: Ի տարբերություն հրատապ հաղորդագրությունների, շատ լուրեր անսպասելի չեն: Որպես կանոն, քաղաքական, տնտեսական եւ մշակութային լուրերից յուրաքանչյուրը ներկայացնում է լրագրողների որոշակի խումբ, որը գիտի, թե ինչը երբ եւ որտեղ է կատարվում: Այս իրադարձությունները մեկնաբանելու համար խմբագրությունները ստանում են հրավերներ, նրանց զանգահարում են մամուլի քարտուղարները կամ միջոցառման այլ պատասխանատուներ: Սակայն նման իրադարձություններն ամենաքիչն են հետաքրքրում լսարանին: Այլ բան է սենսացիան: Ասենք՝ գողին բռնելը պարզապես քրեական խրոնիկա է: Սակայն եթե բռնվել է նորաբաց «Բոսս» խանութը թալանած գողը, ապա դա սենսացիա է: Կնոջ սպանությունը նույնպես քրեական քրոնիկոն է, սակայն սպանված եւ քառատված կնոջ դիակը գետում գտնելը, սենսացիա է:

V. Նշանակալի իրադարձության վերջին հայտանիշը տվյալ պահին ՁԼՄ-ներում ակտիվորեն լուսաբանվող թեմաների հետ նրա հնարավոր կապն է (պատերազմն Իրաքում եւ դիակապությունը, բեդվիններ, որոնք չգիտեն էլ, որ իրենց երկրում պատերազմ է):

Որոշ նշանակալի թեմաներ անվանվում են (եւ համարվում են) հավերժական: Օրինակ՝ մարդու արտաքին եւ իրական էությունների միջեւ հակասությունները: Մեզանում դա քիչ քննարկվող թեմա է, սակայն Արեւմուտքում ու Ռուսաստանում հաճախ են դրան անդրադառնում (Ուոթերգեյթ, Մոնիկա Լեւինսկի, Սկուրատով, Ելցինն ու նրա շրջապատը եւ այլն):

Հավերժական թեմաներից է նաեւ իշխանավորների ու հասարակ մահկանացուների հակամարտությունը: Սրան անմիջականորեն առնչվում է նաեւ չարի ու բարու պայքարը:

Հավերժական են նաեւ այսպես կոչված ցիկլային (պարբերական) թեմաները. պետական եւ եկեղեցական տոները, Վալենտինի օրը եւ այլն:

## Երկրորդական հայտանիշներ

I. Իրադարձությունը չպետք է վիրավորի որեւէ մեկին կամ նրա զգացմունքները:

II. Իրադարձությունը պետք է լինի ճշմարտաման:

III. Իրադարձությունը պետք է լինի այնպիսին, որ նրա մասին հնարավոր լինի պատմել համառոտ:

IV. Տվյալ հանրության վրա նրա հետեւանքների ազդեցությունը (կատաղության մարակված կովերի մահի ներմուծում):

Եթե այս հայտանիշներն առկա են, մամուլն ուշադրության է արժանացնում իրադարձությունը:

## ԿԵՂՏՈՏ ՍՊԻՏԱԿԵՂԵՆԸ ՊԵՏՔ ՉԷ ՓՈՐՓՐԵԼ

Հայաստանի ազատ մամուլն ինքն իրեն սահամանափակել է երկու հիմնական թեմաներով՝ քաղաքականությամբ եւ տնտեսությամբ, որոնք, ըստ ՁԼՄ-ների ներկայացուցիչների, ամենաօրախնդիրն են եւ հավանական լսարանի համար հետաքրքիր: Բացի այս կարեւորագույն թեմաներից (որոնք ողջ լրագրա-ռադիո-հեռուստատեսային կյանքի առանցքն են դառնում սկսած առավոտյան լուրերից, վերջացրած՝ թերթերի մեծածավալ հրապարակումներով), որոշ տեղ է հատկացվում նաեւ արվեստին ու մշակույթին, միջազգային կյանքի տեսությանը եւ ... դե իհարկե՝ խաչբառներին ու աստղագուշակություններին: Մինչդեռ այլ ժողովրդավարական երկրներում ամենից ընթերցվողը, դիտվողն ու հետաքրքիրն են համարվում նշանավոր

քաղաքական գործիչների, մարզիկների, կինոյի եւ շուրջ բիզնեսի աստղերի անձնական կյանքը շոշափող հոդվածներն ու հաղորդումները: Իսկ մեզ մոտ անձնական կյանքին անդրադարձն, իբրեւ կանոն, հաճոյախոսական է լինում եւ համարյա չի քողագերծում բազմաթիվ հետաքրքիր դեպքեր, ինտրիգներ, երբեմն նաեւ ողբերգություններ, որոնց հերոսները մեր երկրի բավականին ազդեցիկ դեմքերն են:

Ինչո՞վ է պայմանավորված նշանավորների անձնական կյանքի նկատմամբ հասարակ մահկանացուների ուշադրությունը: Պարզ հետաքրքրասիրությամբ, ուրիշի կեղտոտ սպիտակեղենը փորփրելու ցանկությամբ: Թերեւս: Սակայն միանգամայն հնարավոր է նաեւ նման երեւոյթի այլ հոգեբանական բացատրությունը. այս աշխարհի հզորների փորձից ես էլ կարող եմ ինչ-որ բան սովորել՝ ոտնահարել մարդկանց արժանապատվությունը, պատիվը, թաւանել, դավաճանել եւ անպատիժ մնալ: Հենց անպատժելիությունն ու ամենաթողությունն են ծնում այն ապաբարոյական մթնոլորտը, որ առկա է մեր հասարակությունում:

Կարդալով վարչապետ Գերհարդ Շրյոդերի անձնական կյանքի մասին՝ Գերմանիայում գիտեն, որ նրա ներկայիս կինը չորրորդն է, որ նրանք համեստ են ապրում, քանի որ վարչապետի եկամուտների մեծ մասն ալիմենտի տեսքով բաժին է հասնում նրա նախկին կանանց. Իսկ մե՞նք ինչ գիտենք մեր Ս. պետական այրի մասին, ով երկու ընտանիք (պաշտոնական եւ քաղաքացիական) է պահում, ընդ որում՝ երկու ընտանիքներն էլ ոչնչից իրենց չեն զրկում: Նա հանցագործ չի համարվում՝ ոչ երկկնության համար, ոչ էլ պետական փողերը վատնելու: Իսկ չէ՞ որ նույնիսկ ամենաբարձր աշխատավարձով անգամ հնարավոր չէ երկու սիրելի կանանց այնպիսի լիության մեջ պահել, որի մասին այլ երկրների վարչապետները կերագեին:

Ի՞նչ գիտենք մեր այն ակտիվ, նաեւ՝ ազնիվ, սկզբունքային, անհաշտ քաղաքական գործչի մասին, ով մի առավոտ խաղատնից դուրս եկավ մի կլորիկ գունար տանուլ տված, եւ նրա ողջ սկզբունքայնությունն ու ազնվությունն անհետացան, այդ թվում նաեւ հեռուստատեկրաններից:

Ոչինչ չգիտենք: Ոչ առաջինի, ոչ էլ երկրորդի մասին: Բավարարվում ենք միայն ասեկոսեներով: Որովհետեւ անպարկեշտ ենք համարում ուրիշի անձնական կյանքին միջամտելը: Եվ ճիշտ էլ համարում ենք. մեր հարեւանի անձնական կյանքն իրենն է, եթե իհարկե, նա զազանաբար չի ծեծում իր կնոջն ու երեխաներին, որոնց պետք է պաշտպանել դաժան հորից: Սակայն քաղաքական գործչի անձնական կյանքը, մանավանդ՝ եթե նա մեր ու ձեր կյանքը լավացնելու համար Արժույթի միջազգային հիմնադրամից ստացված փողերն ակնհայտորեն այլ նպատակների (սեփական առանց այն էլ շքեղ առանձնատան նորոգմանը, սիրուհուն աշխարհը ցույց տալուն կամ երեխաներին արտասահմանյան կրթություն տալուն) է ուղղում: Որովհետեւ այդ փողերի տոկոսները մեր որդիներն ու թոռները պետք է վճարեն:

Հաճախ քաղաքական գործիչների անձնական կյանքի մանրամասները կարող են ավելի շատ լույս սփռել քաղաքական, տնտեսական իրավիճակի, անգամ՝ միջազգային իրադրության վրա, քան մանրամասն քաղաքական կամ տնտեսական վերլուծությունը: Սադամ Հուսեյնի կնոջ հեռացումը, նրա սիրուհու փախուստը եւ պատմություններն այն մասին, թե ինչով է Սադամը ներկում մազերը, չի հանդուրժում, երբ իրեն հակաճառում են, վերջինիս բնութագրում են իբրեւ ինքնասիրահարված բռնակալի, ով իր Ես-ը հաստատելու համար պատրաստ է նվաստացնել, իրեն ենթարկել ցանկացածին, լինի դա կին, ժողովուրդ, երկիր, թե աշխարհ: Ըստ իրաքցու հետ ամուսնացած եւ երկար տարիներ այդ երկրում ապրած էստոնուհի իմ ընկերուհու, ով նաեւ իբրեւ թարգմանչուհի հանդիպել է Սադամին, վերջինս կրթված, խելոք, անձնական շփումների ժամանակ հրապուրիչ անձնավորություն է, որ ունի նաեւ մազնիսական խարիզմա, ինչը նույնպես նպաստում էր նրա ինքնիշխանությանը: Ահա, համադրելով Սադամի անձնական բնութագիրն ու նրա պահվածքը միջազգային ասպարեզում, կարելի է եզրակացնել, որ նրա շատ արարքներ անձնական մղումներից են դրդված:

Ի դեպ, սա ճիշտ է ոչ միայն Սադամ Հուսեյնի պարագայում. անձնական մղումներն առաջնորդում են բոլոր մարդկանց, ինչ պաշտոն էլ նրանք զբաղեցնեն: Այլ հարց է, որ



զարգացած ժողովրդավարական ավանդույթներ ունեցող երկրներում օրենքն ու հրապարակայնությունը այն խոչընդոտներն են, որոնք բարոյություն, թերություններ ու արատներ ունեցողներին խանգարում են ամենաթողություն հաստատել իրենց վստահված տեղամասերում: Հիշենք Մոնիկա Լեիմսկու հետ կապված պատմությունը: Այն ուսանելի է ոչ թե այն պատճառով, որ ջրի երես հանվեց ԱՄՆ նախագահի ու Սպիտակ տան պրակտիկանտուհու ինտիմ հարաբերությունների մանրամասները, այլ՝ որ անբարոյականությունը պատժվում է, անկախ այդ արարքը գործած մարդու դիրքից: Թեկուզ եւ այդ պատիժն ընդամենը ժպտադեմ ու ընտանիքասեր Քլինթոնի իրական կերպարի բացահայտումն էր:

«Անձեռնմխելի» համարվողների անձնական կյանքին միջամտությունը, վարկաբեկող փաստերի հրապարակումը անհրաժեշտ է նաեւ, որ եթե անգամ կոռումպացված դատարանն արդարացմի այդ գործողությունները, հասարակության աչքերում նրանք արդեն հեղինակազրկվում են:

Բացի իրական դեմքը բացահայտելուց, այս կամ այն անբարեկիրթ արարքները հրապարակայնացնելուց, մասնավոր կյանքը ներկայացնելը կարող է օգնել արտակարգ իրավիճակների, դեպքերի հետաքննությանը: Քննարկենք բոլորիս լավ հայտնի հոկտեմբերի 27-ի ողբերգական դեպքերը: Բազմաթիվ հրապարակումներում այդ ահաբեկչական գործողության նախաձեռնողն ու գլխավոր կազմակերպիչը ներկայացվում էր իբրեւ հայկական Չերոստրատ: Սակայն հազիվ թե Չունանյանին եւ նրա համախոհներին միայն Չերոստրատի փառքը մղեր նման գործողությունների: Իհարկե, իրականության բացահայտումն իրավապահ մարմինների գործն է: Սակայն լրագրողներն էլ պետք է ոչ միայն սեփական ենթադրություններն անեն ու բազմապիսի մտահանգումներ ներկայացնեն, այլ անց կացնեն սեփական հետաքննություն: Եվ այստեղ ինչ-որ օգուտ կարող է տալ ոչ միայն Չունանյանի եւ մյուսների, այլեւ սպանվածներից մեկի՝ Վազգեն Սարգսյանի անձնական կյանքին ծանոթ լինելը: Չեռուստատեսությամբ բազմաթիվ անգամ ցուցադրեցին, թե ինչպես է Չունանյանը ինքնաձիգի կոթով հարվածում արդեն մեռած վարչապետին եւ գոռում. «Սրանից էի՞ք վախենում, հա՞»: Ըստ հոգեբանների, նման ատելություն հնարավոր չէ տածել անծանոթ կամ քիչ ծանոթ մարդու նկատմամբ: Ատելությունն, իբրեւ կանոն, առաջանում է հակասություններից, նախանձից, այլ միջանձնային հարաբերություններից ու զգացումներից: Չտեսաբար, կարելի է ենթադրել, որ Չունանյանի եւ Սարգսյանի միջեւ ինչ-որ կոնֆլիկտ է եղել, ինչը այլ դրդապատճառների հետ հանցագործին արյունահեղության է մղել:

Եղե՞լ է բախում: Ի՞նչ պատճառներով: Սրանց բացահայտումն էլ կարող է դառնալ լրագրողական հետաքննության թեմա: Իսկ դրա համար անհրաժեշտ կլինի ծանոթանալ նրանց անձնական կյանքին: Այս գործում մասնավոր կյանքը ներկայացնելու եւս մի թեմա կարող էր լինել Չունանյանի թուրքիա այցելությունը: Պետք է հիշել, որ մասնավոր կյանքը միայն ինտիմ հարաբերությունները չեն, այլեւ ընկերական շրջապատի, ընտանիքի, հարազատների հետ կապերը, հրապուրանքները, զվարճալիքները, այսինքն այն ամենը, ինչ հասարակական կյանքից անդին է:

Մարդու մասնավոր կյանքին առնչվող թեմաներից չզրված տաբուն վերացնելը կարող է շատ բան փոխել հասարակական գիտակցության մեջ: Խոսքը ոչ թե սկանդալային խրոնիկային է վերաբերում, այլ մերկացնող հրապարակումներին:

## **ԱՄԵՆ ՈՔ ՏԵՍՆՈՒՄ Է ԱՅՆ, ԻՆՉ ՑԱՆԿԱՆՈՒՄ Է ՏԵՍՆԵԼ**

Դուք նկատե՞լ եք, որ միաժամանակ նույն իրադարձությանը ներկա եղած տարբեր մարդիկ դրա մասին տարբեր կերպ են պատմում: Տպավորություն է ստեղծվում, թե խոսքը մի քանի իրարից տարբեր իրադարձությունների մասին է: Եվ սա վերաբերում է

ոչ միայն տեղի ունեցածի գնահատմանը, այլև այն տեսանկյունից, որով մենք նայել ենք: Նույնը կատարվում է նաև լրագրության մեջ: Ինքներդ էլ կարող եք համոզվել, եթե նույն օրվա ընթացքում տարբեր հեռուստաալիքներով նայեք լուրերի թողարկումները եւ համեմատեք, թե տարբեր լրագրողներ ինչպես են գնահատում այս կամ այն իրադարձությունը: Եթե դա պաշտոնական հաղորդագրություն կամ մարզական նորություն չէ, ապա ձեզ կթվա, թե լրագրողները տարբեր առաջադրանքներ են կատարել: Գնահատականների եւ կարծիքների նման բազմազանությունը կարող է եւ քաղաքական, եւ կոնյունկտուրային հենք ունենալ, բայց հաճախ ամեն ինչ շատ ավելի պարզ է. մարդը տեսնում է այն, ինչ ցանկանում է տեսնել, լսում է այն, ինչ ցանկանում է լսել, հիշում է այն, ինչ ցանկանում է հիշել:

Կատարենք մի փոքրիկ փորձ: 45 վայրկյան ուշադիր նայենք այս գծանկարին:

Այժմ փորձեք առանց նկարին նայելու այն պատկերել մաքուր թղթի վրա: Հնարավոր է, որ այն, ինչ դուք նկարեք, տարբերվի գծագրում պատկերվածից (այն բերված է «Լրագրության հիմունքներ» գրքից, որ հրատարակվել է Հայաստանում Pro Media/IREX ծրագրի շրջանակներում):

Այդ տարբերությունները, ըստ Ռոյ Բերկոյի, առաջանում են նրանից, որ մեր ուզածը տեսնելու եւ լսելու ցանկությունն ազդում է մեր ընկալման վրա:

Որպես օրինակ դիտարկենք «Արեւ, արեւ եկ, եկ / Ձիզի քարին վեր եկ» տողերը: Մենք հեշտությամբ կհիշենք եւ կկրկնենք, որովհետեւ մեր ուշադրության օբյեկտ, առաջին հերթին, դառնում է այն, ինչ արդեն ծանոթ է մեզ, այն, ինչ մենք արդեն լսել ու տեսել ենք:

Ինչ վերաբերում է գծապատկերին, մենք վերարտադրում ենք միայն շրջաններն ու կիսաշրջանները, որովհետեւ հակված ենք ամեն ինչ տեսնել հաշվեկշռված ձևով:

Բացի այդ մենք հակված ենք նկատել ավարտուն պատկերները, այդ պատճառով էլ, հնարավոր է, գծապատկերի կենտրոնի շրջանագիծը բաց թողնենք կամ այն խաչաձեւ ենք հատվող ուղիղներով:

Վերապատմելով ինչ-որ բան՝ մենք հաճախ ենք մոռանում մանրամասները: Այդ պատճառով էլ, հավանաբար, նկարում նույնպես բաց կթողնեք մանրամասները:

Ինչպես հաղթահարել մարդկային հոգեբանության նման դավադիր դրսևորումները: Պարզագույն ձեւն է. նոթատետրում գրի առեք այն ամենը, ինչն աչքի է զարնել, բաց մի թողեք մանրամասները, գույները, հոտերը, վերստեղծեք այն մթնոլորտը, որին ականատես եք եղել, եւ ընթերցողը, դիտողն ու ունկնդիրն էլ դա կտեսնի այնպես պարզորոշ, ասես ինքն է ականատեսներից մեկը եղել:

## ՍԹՐԵՍ

Ե. Պրոնինայի «Լրագրողի ստեղծագործական աշխատանքի հոգեբանական առանձնահատկությունները» աշխատության մեջ բերվում են աղետի վայրում, մարդկանց կյանքին սպառնացող արտակարգ իրավիճակում հայտնված լրագրողի պահվածքին հատուկ ախտանշանները՝ տուժածների հետ շփումների ժամանակ:

Դրանք են.

- դյուրագրգռություն, առանց պատճառի բռնկվելու հակվածություն,
- սրտի խփոցներ, ցավեր կրծքավանդակում,
- անվերահսկելի դող, նյարդային սարսուռ,
- նպատակասլացության կորուստ, կենտրոնանալու անընդունակություն,

- ակամա արցունքներ,
- անհանգստություն, քաոսային ակտիվություն,
- հյուժում, հանկարծակի ուժասպառություն, դատարկվածության զգացողություն,
- այլոց «կաշելու» ցանկություն, խոսելու, տեսածը նորից ու նորից պատմելու պահանջ,
- փախչելու ձգտում,
- հուսահատություն, զգացմունքները հաղթահարելու անկարողություն:

Մեր կողմից ավելացնենք եւս մի քանիսը, որ նկատել ենք «Նորդ-օստի» ահաբեկչության վայրից ռեպորտաժներ վարող լրագրողների մոտ.

- ճնշվածություն,
- շփոթվածություն,
- հուզվածություն,
- փութագարություն,
- սեփական անձի նկատմամբ անտարբերություն,
- անզգայացում, սառնություն վերջույթներում:

Այս ախտանշաններից մի քանիսը նկատվում են ոչ միայն անմիջականորեն դեպքի վայրում գտնվող լրագրողների մոտ, այլեւ ամենատարբեր ծրագրեր (լուրերից մինչեւ «Դոմինո սկզբունքի» նման շոուները) վարողների:

Այս բոլոր ախտանշանները հոգեբանական ցնցման առաջին արձագանքներն են: Ընդսմին, սթրեսային կարող են լինել նույնիսկ այնպիսի կարծես թե անմեղ իրավիճակներ, ինչպես քննությունը կամ ասենք երեխայից, գործընկերոջից ակնհայտ մեծ պահանջներ ակնկալելը: Սուր ռեակցիան կարող է տեսել մինչեւ 15 րոպե: Իսկ եթե մարդը բախվում է քննադատության, գրգռվածության, իրեն չհասկանալու, ապա սթրեսային իրավիճակը կարող է ավելի երկար տեսել: Նման իրավիճակներում օգնության կարող են հասնել պարզագույն միջոցները. բարեկամական ձեռքսեղմումը, ամեն ինչ հասկացող հայացքը, թեթևակի գլխով անելը, ուսին թփթփացնելը, մեջքը շոյելը կամ մեջքից թեթևակի հրելը (որ կարող է նշանակել «շարունակիր աշխատել, ամեն ինչ լավ կլինի»), նույնիսկ «սեւ հումորն» այս դեպքում կարող է օգնել, կարծում է «Ինքնատիրապետումը եւ ինքնօգնությունը ծայրահեղ իրավիճակներում աշխատելիս» ուսումնասիրության հեղինակ Ե. Չերեպանովան: Այսուհանդերձ, հումորը պետք է շատ զգույշ օգտագործել. կան մարդիկ, ովքեր կատակը բացարձակապես չեն ընկալում եւ շատ ցավագին են արձագանքում դրա ցանկացած դրսեւորմանը: Առավել եւս ծայրահեղ իրավիճակում կատակը կարող է ագրեսիվ արձագանք առաջացնել:

Ինքնատիրապետման ժամանակավոր կորստից հետո զգացմունքներն ասես «սառչում են», տեղի է ունենում ուժերի գերմոբիլիզացում: Այնուհետեւ վրա է հասնում փարատման, ցրման փուլը, իսկ սրան հետեւում է վերականգնման փուլը, երբ մարդը վերադառնում է նորմալ կյանքի: Սակայն բոլորի մոտ չէ, որ սթրեսային վիճակն առանց ցավի ու առանց խոր հետքեր թողնելու է անցնում: Սեւեռուն հիշողությունները շարունակում են մարդուն հետեւել անգամ ողբերգությունից մեկ-երկու ամիս հետո: Մարմինը հյուժվում է, քունն է խանգարվում, ուշադրությունն ու հիշողությունն են թուլանում, ընկճվածությունը չի անցնում, մարդն անընդհատ գտնվում է ճնշված վիճակում՝ սպասելով ինչ-որ վատ բանի: Այս ամենը մատնանշում է հետսթրեսային խանգարումների առկայությունը: Այդ դեպքում անքնություն է առաջանում, երազներն ուղեկցվում են կրկնվող մղձավանջներով, մարդը հակված է շուտ բորբոքվելու, ագրեսիվության:

Երեխան, ում հայրն ու տատը մահացել են անբուժելի հիվանդությունից՝ քաղցկեղից, ընդունվում է բժշկական համալսարան, որպեսզի գտնի այդ հիվանդության բուժումը: Սակայն առանց համապատասխան հոգեբանական մշակման, նրա շփումը ծանր

հիվանդների հետ կարող է հանգեցնել նոր բարդությունների, ստեղծել նոր սթրեսային իրավիճակ: Նման վարքն անվանում են արձագանքում:

Հիվանդագին հիշողություններից ազատվելու մյուս միջոցը գերակտիվությունն է: Փորձելով խեղդել տհաճ հիշողությունները՝ մարդը գլխովին խրվում է աշխատանքի մեջ՝ ինքն իրեն հասցնելով հյուծվածության:

«Անպիտան աղջիկ» Դարյա Ասլամովան սթրեսից ազատվել է փորձում նոր, առավել ուժեղ եւ սուր տպավորություններ փնտրելով՝ չկասկածելով անգամ, որ գնում է ինքնակործանման ճանապարհով:

Ոմանք փորձում են կրկնակի ցնցումներից խուսափել ինքնամեկուսացմամբ. ձգտում են պաշտպանվել տհաճ հանդիպումներից, արհեստականորեն թուլացնում են ակտիվությունը, շփումների, հետաքրքրությունների շրջանակն են նեղացնում:

Ինքնապաշտպանության բոլոր թվարկված ձեւերն անվանում են հարմարման ոչ համարժեք միջոցներ: Դրանք հաճախ հանգեցնում են ակնհույսային կամ դեղորայքային կախվածության, միջանձնային հարաբերությունների խանգարման, սոցիալական մեկուսացման, լուրջ հոգեբանական-ֆիզիկական խնդիրների: Այդպիսով վերածվում են «ցնցումների մի համալիրի»:

## ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՐԱԲԵԿՉՈՒԹՅՈՒՆ

Ե. Չերեպանովայի «Ինքնատիրապետումը եւ ինքնօգնությունը ծայրահեղ իրավիճակներում աշխատելիս» ուսումնասիրության մեջ բերված են ինքնագիտակցության մի քանի որակներ, որոնք օգնում են հեշտությամբ հաղթահարել սթրեսը: Դրանք են.

- սեփական գոյության կարելիության եւ անձնական արժեքի գիտակցումը,
- անկախության զգացումը եւ սեփական կյանքի վրա ազդելու ընդունակությունը (ի հակադրություն անօգության եւ հովանավորի անհրաժեշտության զգացման),

- փոփոխությունների նկատմամբ հետաքրքրությունը եւ պատրաստակամությունը (նրանց մեջ ոչ թե վտանգ, այլ զարգացման հնարավորություններ տեսնելը):

Ուստի, սթրեսային իրավիճակից հետո փորձեք ըմբռնել եւ վերափնաստավորել ձեզ հետ տեղի ունեցածը, այն, ինչին ականա (ավելի ճիշտ՝ ձեր մասնագիտական պարտքը կատարելիս) ներկա եք եղել:

Եթե ապրած կամ տեսած ողբերգությունից հետո դուք վերլուծել եք տեղի ունեցածի էությունը, ինչպես նաեւ գիտակցել եք ձեր կյանքի ու աշխատանքի իմաստը, ապա հնարավորություն ունեք հոգեբանորեն առողջ մնալու: Նման վարքագիծն անվանում են գոյատևելու ստրատեգիա:

Սթրես ունենում են ոչ միայն զոհերն ու լրագրողները, այլեւ լսարանը, ում համար նախատեսված է տեղեկատվությունը: Ջանգվածային լրատվության միջոցներում ծայրահեղ իրավիճակը ներկայացնելու ձեւից է կախված լսարանի ցնցման աստիճանը: Չէ՞ որ վերջինս կատարվողն ու կատարվածըն ընկալում է ըստ լրագրողի ներկայացրածի: Այսինքն՝ տեսնում է լրագրողի աչքերով: 2002 թվականի հոկտեմբերի 23-26-ի դեպքերից (խոսքը «Նորդ-Օսթի» ներկայացման ժամանակ չեչեն գրոհայինների կազմակերպած ահաբեկչությանն է վերաբերում) հետո ռուսական շատ հեռուստաալիքներ ցուցադրում էին չեչեն ահաբեկիչների կողմից ծաղրուծանակի, նվաստացումների ենթարկված գերիների եւ ստրուկների մասին հաղորդումներ: Գրիչն անգոր է նկարագրել այն գազանությունները, որ ցուցադրվում էին էկրաններին: Այս հնարքը, երբ միտումնավոր ահ ու սարսափ է ներշնչվում, անվանում են «ցնցման խորացման հնարք»: Միանգամայն պարզ է, որ տվյալ դեպքում զանգվածային

լրատվամիջոցները կոնկրետ նպատակ ունենին. անողոք, արյունարբու, դաժան, նենգ թշնամու կերպար ստեղծել: Սակայն պատկերացրեք հեռուստադիտողի վիճակը, որն առանց այդ էլ մի ամբողջ շաբաթ ասես ինքն էլ պատանդների հետ ատրճանակների փողերի տակ էր անցկացրել: Նման հաղորդումներ դիտելուց հետո ոչ միայն երեխաների, այլև մեծահասակների մոտ առաջանում են ճնշվածություն, տրամադրության անկում, նույնիսկ հետճգնաժամային իրավիճակ: Ըստ հոգեթերապեւտների դիտարկումների, բավական է 4-5 օր լուրերի թողարկումներ չդիտել, եւ հիվանդների վիճակը նկատելիորեն բարելավվում է:

Այսպես էլ մեր հանրապետության որոշ թերթեր. իրականությունը ներկայացնում են միայն մռայլ գույներով: Ոչ մի լույս: Եթե կարդաք միայն այդ թերթերը եւ լսեք «02» -ի նման հաղորդումներ, ինքներդ էլ չեք նկատի, թե ինչպես եք աստիճանաբար վերածվում դժգոհ տարրի: Դեռահասների մոտ, ի տարբերություն մեծահասակների, դա արտահայտվում ագրեսիվության աճով:

Լրագրության մեջ նման հնարքն անվանում են տեղեկատվական ահաբեկչություն: Ահա դրա մի քանի դրսեւորումներ.

- բռնության դաժան մանրամասների «ըմբռնում»,
- սպանության տեխնոլոգիաների նկարագրում կամ ցուցադրում,
- վախի, անպաշտպանվածության զգացման ներշնչում,
- շարադրանքի ցինիկ, անանզնիվ ոճ,
- նյութի մատուցման միտումնավորություն

Հանցագործության կամ աղետի ամենադաժան պահերի գիտակցաբար կամ որ ավելի վատ է՝ միտումնավոր ներկայացումը ուժեղացնում է վախի զգացումը: Շատ հաճախ, լրագրողը, փորձելով ազատվել վախից, ինքն էլ ընկնում շոկային իրավիճակի մեջ, հուսահատություն, սարսափ, դատապարտվածության զգացում արտահայտում: Սեփական Ես-ի հետ մենակ մնալով՝ նա կարող է դիմել ներքին լարվածությունը հաղթահարելու ապակառուցողական միջոցների. արդարացնել ահաբեկիչների գործողությունները, մեղադրել զոհին, դժգոհություն արտահայտել փրկարարների գործողություններից, արժեզրկել ինքն իրեն: Գնահատման եւ միաժամանակ կատարվածից հեռու մնալու միջոց են դառնում նաեւ հումորն ու ցինիզմը: Սակայն նման թեթեւացումն ավերում է այսպես կոչված «կոորդինատների ներքին համակարգը», մարդու բարոյական հիմքերն ու նրա հիմնարար համոզմունքները: Ժամանակի ընթացքում սթրեսից ինքնապաշտպանվելու այդպիսի միջոցի դիմած մարդու մոտ նկատվում են հոգեկանի տրավմատիկ փոփոխություններ. շուտ բռնկվելու հակում, ճակատագրապաշտության, փախուստի ու մոռացության, անհատի մեկուսացման, անպատասխանատվության, որոշումներ ընդունելու պասիվության դրսեւորումների:

Պարտադիր չէ, որ տրավմատիկ տեքստերը կապված լինեն աղետների եւ մարդասպանությունների հետ, դրանց պատճառ կարող են լինել նույնիսկ «սարսափ»-տեսահոլովակները, կինոաստղերի կյանքի ցնցող մանրամասները եւ այլն: Այսինքն՝ այն ամենը, ինչ խաթարում է չարի ու բարու, թույլատրելիի եւ անթույլատրելիի մասին մեր հիմնարար պատկերացումները:

«Մեծ լվացք» հեռուստահաղորդման ընթացքում, հաղորդավարի՝ Անդրեյ Մալախովի համաձայնությամբ ցուցադրվեցին գաղտնի տեսախցիկով նկարահանված կադրեր. հաղորդման մասնակիցները որոշել էին վրեժ լուծել իրենց կին ղեկավարից եւ գաղտնի նկարահանել էին նրան ընկերոջ հետ: Եվ բանալու անցքից նկարահանված ուրիշի այս անձնական կյանքը ցուցադրվեց միլիոնանոց հեռուստալսարանին: Սա ամենախիսկական տրավմատիկ տեսաշար էր, որը եթեր չէր թողնի քաղաքակիրթ եւ ոչ մի երկրի եւ ոչ մի հեռուստատեսություն: Ոչ միայն այն պատճառով, որ դրա համար դատական պատասխանատվության կենթարկեին, այլև, որ դա խաթարում է շատ մարդկանց

արժեքային համակարգը, ցինիզմ եւ անահատի նկատմամբ անհարգալից վերաբերմունք է արտահայտում:

Հոգեբան եւ հոգեթերապեւս Էրիկ Էրիկսոնը, որ կանխագուշակել էր «խռովարար երիտասարդության», սեքսուալ հեղափոխության եւ կոնտրոլչակույթի երեւան գալը եւ լավ էր հասկանում ժամանակակից մարդու խնդիրները, համարում էր, որ սոցիալական կատակլիզմների դարաշրջանում բարոյական մարդը պետք է հետեւի եթե ոչ Աստվածաշնչի պատվիրաններին, ապա գոնե հետեւյալ դրույթին. «Վարվիր ուրիշների հետ այնպես, որ դա եւ նրան, եւ քեզ նոր լիցք հաղորդի»:

Մոսկվայի հոկտեմբերյան (2002 թ.) ահաբեկչությունից հետո առաջ քաշվեց այն հարցը, թե ինչպես պետք է ներկայացվեն նման դեպքերը զանգվածային լրատվամիջոցներում: Արեւմտյան յուրաքանչյուր իրեն հարգող լրատվամիջոց ունի լրագրողների սեփական վարքականոն: Օրինակ, Մեծ Բրիտանիայում գոյություն ունի Յեռուստատեսության եւ ռադիոյի նորմատիվային հանձնաժողով, որը մշակել է սեռական տեսարանների եւ բռնության ցուցադրման կանոնները, ինչպես նաեւ ճաշակի ու պատշաճության նորմերը: Նա է մշակում նաեւ անձնական կյանքին չարտոնված միջամտության անթյլատրելիության նորմերը:

BBC-ին ունի վարքի իր կանոնագիրքը, որը վերաբերում է պատշաճությունն ու ճաշակը պահպանելուն եւ բռնություն ցուցադրելու սահմանափակումներին: Ըստ այդ կանոնագրի, մինչեւ ժամը 21.00-ն ցուցադրվող բոլոր ծրագրերը պետք է պիտանի լինեն լայն լսարանի, այդ թվում՝ երեխաների համար: Նման հանձնարարականներ կան նաեւ ռուսական ընկերություններում:

Լրագրողի հոգեբանական անվտանգությանը վերաբերող բազմաթիվ հանձնարարականներից բերենք մի քանիսը, որ շարադրված են Ե. Պրոնինայի աշխատությունում.

«Առավել սթրեսածին են.

- խոր վշտի կամ հուսահատության պահին մարդուն հանկարծակի նկարահանելը,
- մարդու արժանապատվությունը վիրավորող նվաստացումներ ցուցադրելը,
- խոշտանգումների, բարոյական եւ ֆիզիկական ծաղրուծանակի ցուցադրումը,
- ագրեսիոն՝ զոհերի տանջանքների պատճառ հանդիսացող գործողությունների ուղղակի կամ անուղղակի արդարացումները,
- բռնացողի (կոնկրետ մարդու կամ սոցիալական խմբի) հիացումների եւ անպատժելիության ցուցադրումը,
- եթերում ահաբեկչին խոսք տրամադրելը (ինչն անուղղակիորեն «լեգալացնում է» նրա գործողությունները),
- մեղավորներ փնտրելը,
- զոհին ուղղակի կամ անուղղակի մեղադրելն ու փնովելը,
- կոլեկտիվ ապաշխարության կամ մեղքերի թողության կոչերը,
- զոհի հասցեին սարկազմը կամ հումորը:

Իրադարձությունների բացասական հետեւանքը նշանակալիորեն թուլանում է, եթե տեղեկատվության մեջ.

- խնդիրը ներկայացվում է իբրեւ լուծվող,
- առկա են հստակ բարոյական կողմնորոշիչներ,
- կա անորոշության դրական իմաստավորում,
- ներշնչվում է հավատ ապագայի նկատմամբ,
- դրական է գնահատվում իրադարձությունների

մասնակիցների արժանավայել պահվածքը,  
 - առկա են իմաստակիր արժեքներ (երախտագիտություն, հոգատարություն, սեր, ստեղծագործություն, պատիվ, արիություն եւ այլն),  
 - պատկերվում են ակտիվ դիմադրության դեպքերը, դժվարությունները հաղթահարելու իրական գործունեությունը,  
 - հաղորդվում է խնդրի լուծման ընթացքի մասին՝ ընդհուպ մինչեւ դրա վերջնական լուծումը (ինչի մասին հաճախ են մոռանում հաղորդել ՁԼՄ-ները),  
 - հոգեբանական աջակցություն է հայտնվում տուժածներին եւ փրկարար գործողությունների մասնակիցներին (ցուցադրվում է սոցիալական հավանությունն ու օգնությունը):

Այս կանոնների խախտումը վկայում է լսարանին վնասելու միտումի մասին՝ անհատի վրա զգացմունքային եւ հոգեբանական վերահսկողության հասնելու, խուճապային արձագանքներ առաջացնելու նպատակով»:

## **ՀՈՒՄՈՐԸ ԵՎ ԽԱՂԸ՝ ԻՔՐԵՎ ԼԻՑՔԱԹԱՓՄԱՆ ԲԱՂԱԴՐԱՄԱՍԵՐ**

Մարդն ապրում է՝ ձգտելով հաճույք ստանալ: Հաճույք՝ հաճելի մարդկանց հետ շփվելով, հաճույք՝ ստեղծագործական աշխատանքից, արվեստին հաղորդակցվելուց, այնպիսի վնասակար սովորությունից, ինչպիսին ծխելն է, ուտելուց, խմելուց, նոր սանրվածքից կամ նոր կոշիկից: Թվարկումը կարելի է անվերջ շարունակել: Հաճույքը մեր կյանքում մշտապես առկա ամենասուր հույզերից մեկն է: Իսկ հաճույքի բաղադրամասերից է մեր ճնշված զգացումներով, վատ տրամադրությամբ, ընկճված վիճակով պայմանավորված հուզական լարվածության լիցքաթափումը: Լիցքաթափվելու համար մեկը մեծ լվացք է սկսում, մյուսը՝ երաժշտություն է լսում, երրորդը՝ ձեռքն է վերցնում զվարճալի պատմությունների արդեն քրքրված, բայց շատ սիրելի գիրքը: Տարիներ առաջ, վիրահատության պատրաստվելիս, ես սարսափելի վախեցած էի, մանավանդ, երբ իմացա, որ հիվանդասենյակի իմ հարեւանուհուն վիրահատելիս սխալմամբ որովայնախոռոչում վիրախճուծ (տամպոն) էին թողել, եւ այդ կինն արյան վարակում էր ստացել ու կրկնակի վիրահատությամբ մի կերպ փրկվել մահից:

Պատկերացրեք իմ վիճակը: Միակ բանը, որ ինձ պահում էր հիվանդանոցում, այն գիտակցումն էր, որ առանց վիրահատության կմեռնեի: Ես, լսածիս ազդեցության տակ, ոչ քնել էր կարողանում, ոչ ուտել: Սակայն տնից հետս վերցրել էի հենց նոր գնած մի գիրք. «Ռուսական թատերական պարողիաները 19-րդ դարավերջին եւ 20-րդ դարասկզբին»: Ծուլորեն թերթում էի այն՝ ցրվելու համար: Սակայն վայրկյաններ անց գիրքն այնպես կլանեց ինձ, որ սկսեցի քրքրջալ: Հարեւանուհուս դա տարօրինակ թվաց: Ես բարձրածայն կարդացի ծիծաղաշարժ այդ հատվածը: Նա խնդրեց շարունակել: Մի փոքր անց մենք արդեն երկուսով էինք ծիծաղում: Երբ համայն կատարող բժիշկը մեզ տեսավ քրքջալիս, չէր հավատում, թե հանդիպել է այն նույն կանանց, որոնցից մեկն արդեն խաչ էր քաշել իր կյանքի վրա, մյուսն էլ պատրաստվում էր դրան:

Հունորը, կատակը եւ խաղը կարող են թեթեւացնել ոչ միայն կենցաղային կարծես թե ամենաանելանելի իրավիճակը, այլեւ՝ լիցքաթափել սոցիալական լարվածությունը: Եվ ահա՝ շատ տոտալիտար երկրներում մասնակիորեն կամ ամբողջությամբ արգելված է հումորի ամենաներգործուն տեսակը՝ սատիրան: Այսպես, Ջիմբաբվեում արգելվեցին «բանանային» թեմայով անեկդոտները: Հրամանագրի հեղինակը եւ անեկդոտների գլխավոր հերոսը հենց երկրի նախագահն էր՝ Քանաան Բանանան: Իսկ Հյուսիսային Կորեայում ընդհանրապես արգելված է ցանկացած թեմայով ցանկացած սատիրա,

քանի որ «ժողովուրդների դրախտում ամեն ինչ հրաշալի է»: Սակայն անգամ նման արգելքներին սրամիտ մարդիկ կարողանում են դիմակայել: Ռիչարդ Չարիսը «Ձանգվածային հաղորդակցության հոգեբանություն» գրքում բերում է օրինակ, թե ինչպես էր «մի սրամիտ չինացի ստեղծել համակարգչային վիրուս, որը ջնջում էր բոլոր նրանց համակարգիչների հիշողության բովանդակությունը, ովքեր «ոչ» էին պատասխանում «համարո՞ւմ եք, որ վարչապետ Լի Պենը ապուշ է» հարցին:

Այս գրքի վրա աշխատելիս, ես թերթում էի իմ արխիվն ու գտա 90-ականների սկզբներին լույս տեսած «Ձերկալո» ռուսալեզու թերթից կտրածոներ:

1992 թվականն էր: Պատերազմ, կաշառակերություն, թշվառություն: Ամենատարբեր ուղղությունների տարբեր թերթեր էին լույս տեսնում: Ու համարյա բոլորում տպագրվում էին այդ ժամանակներում մոդայիկ դարձած աստղագուշակություններ: Եվ ահա միտք հղացա՝ միավորել խաղը եւ աստղագուշակությունը: Իմ «աստեղային անձը» ոգեհարցման էր կանչում որեւէ նշանավոր գրողի եւ նրան օրվա հրատապ թեմաներով հարց տալիս: Ոգին էլ՝ պատասխանում էր, ընդ որում կոնկրետ գրքից մեջբերումներով: Այդպես «Ձերկալո» թերթում հայտնվեց նոր խորագիր՝ «Ոգեհարցում»: Պատկերացրեք՝ այդ «սեանսներից» մի քանիսը մինչ այսօր էլ թարմ են: Ահա, օրինակ, թե ինչ էր պատասխանել Յարոսլավ Չաշեկի ոգին պատերազմի մասին հարցումին.

- Մարդկանց այն աշխարհն ուղարկելու նախապատրաստությունը միշտ իրականացվել է Աստծո կամ մարդկային երեւակայությամբ ստեղծված այլ բարձրագույն էակի անունից:

Իմ «աստեղային անձը» հարցնում է.

- Տարածաշրջանում առաջիկա ռազմական գործողությունների ձեր կանխատեսումը: Չաշեկը պատասխանում է.

- Մեր դիրքերը միանգամայն բարենպաստ են: Այժմ արդեն ոչ ոք չի կասկածում, որ կհաղթի կանտրոնական տերություններից մեկի զինուժը: Պատերազմը կավարտվի ավելի շուտ, քան մենք կարող ենք ենթադրել:

Անվրեպ գուշակություն էր:

Ամենից շատ ինձ դուր էր գալիս «զրուցել» Կոզմա Պրուտկովի ոգու հետ: Ահա մի քանի օրինակ.

- Ինպե՞ս կգնահատեք որոշ հայրենական գործիչների հրապարակային ելույթները:

- Մի անգամ ստողին, ո՞վ է հետո հավատում:

- Ինչպես եք վերաբերվում «փողի քսակների» նոր սերնդին:

- Անարդար հարստությունը նման է ջրկոտեմի՝ աճում է ամեն մի քեչայի վրա:

- Սոցիալ-քաղաքական ներկա իրավիճակի ի՞նչ ելք եք տեսնում:

- Ամեն խաղում չէ, որ տուգերն են հաղթում:

Իր աշխատանքում հումորի, խաղի դիմող լրագրողը նման է դերասանի: Նա պետք է ստեղծի մի միամիտի, փնթփնթանի, գուշակուհու կերպար: Ամեն ինչ կախված է երեւակայությունից, կերպարանափոխվելու ունակությունից: Այդ կերպարանափոխությանը պետք է ենթարկվեն նաեւ ձեր խոսքը, դարձվածքների ռիթմը, բառապաշարը: Մի կեղծ, գիտական խոսք, եւ կերպարը կոչնչանա: Նման խաղին լրացուցիչ ինտրիգ է հաղորդում խաբկանքը, երբ ընթերցողը չգիտի, թե ով է այդ Փնթփնթանը, Բ.Ս.-ն, կեղծանվան տերը՝ տղամա՞րդ, կի՞ն, ջահե՞լ, սրամիտ մե՞կը, թե՞ կենսափորձով իմաստնացած հեզնախոս մի թերահավատ: Փորձեք, խաղ արեք, հորինեք նոր ձեւեր, նոր ժանրեր, մի բացահայտեք ձեզ: Փորձարկեք դիմակը՝ կուզեք մեկը, կուզեք՝ ամեն անգամ նորը: Ինչպես երեւակայությունը կթելադրի: Դա չափազանց հետաքրքիր խաղ է: Ձեր կերպարն ինքը թեմաներ կհուշի եւ կառաջնորդի ձեզ, երբ կնստեք համակարգչի առջեւ կամ ձեռքներդ կվերցնեք սովորական գնդիկավոր գրիչը:

**ՀԱՄՈՋՎԱԾ ԵՔ,  
ՈՐ ՁԵՋ ՀԱՍԿԱՆՈՒՄ ԵՆ**



Լրագրության հիմնական գործառույթներից մեկը լսարանին համոզելն է: Եվ որպեսզի ձեզ հասկանան, անհրաժեշտ է ստիպել, որ ոչ միայն ձեզ ունկնդրեն, այլև՝ լսեն- ընկալեն: Ունկնդրելով՝ մենք շահագործում ենք մեր ունկը, լսելով-ընկալելով՝ ուղեղը, որովհետև ուշադրությունը կենտրոնացնում ենք խոսողի բառերի վրա: Ինչպե՞ս գրավել ունկնդրի ուշադրությունը: Դուք կամ դադար եք առնում, կամ՝ փոխում եք ձայնի ելեւեջները, կամ՝ դիմում եք խոսակցության թեման փոխելու հնարքին: Մեր փիլիսոփայության դասախոսն, օրինակ, նման դեպքերում անեկդոտ էր պատմում: Ջվարճացնելով լսարանը՝ նա շարունակում էր դասախոսությունը: Ինչպես պարզվեց, նույն անեկդոտը նա բոլոր կուրսերում պատմում էր դասախոսության նույն պահին: Եվ դա ազդեցություն էր ունենում, թեպետ բոլորն արդեն գիտեին այդ փոքրիկ խորամանկությունը:

Որպեսզի ձեզ ոչ միայն ունկնդրեն, այլև հասկանան, անհրաժեշտ է պահպանել հետեւյալ վեց պայմանները.

մաքուր ու միասնական ազգային լեզու,  
մասնագիտական լեզվի հնարավորությունների օգտագործում,  
լսարանի մտավոր մակարդակի նկատառում,  
տեղեկատվության ամբողջականություն,  
տրամաբանված շարադրանք,  
ուշադրության կենտրոնացվածություն:

Ես այստեղ կավելացնեի նաև խոսքի տեմպը:

Քննենք վերջին երեք կետերը: Եթե դուք անգամ ամենահետաքրքիր մտքերն եք արտահայտում, սակայն չեք պահպանում շարադրանքի տրամաբանությունը, թեմայից- թեմա եք անցնում, ապա լսարանը պարզապես ի վիճակի չի լինի կենտրոնացնել ուշադրությունը ձեր ասելիքի վրա: Ահա թե ինչու, եթե դուք բավարար կազմակերպված չեք խոսում, ցրված եք, եթե կուտակել եք չափազանց շատ տեղեկություններ, սակայն չեք կարողանում օգտագործել եղած ամբողջ նյութը, այն բաժանեք մի քանի մասերի, եւ եթե հեռուստաեթերի կամ թերթի հնարավորությունները թույլ են տալիս, նյութերի շարք արեք: Եթե հեռուստաժամանակի կամ թերթային տարածքի սահմանափակում է դրված՝ առանձնացրեք ամենակարեւորը, մի նյութ պատրաստեք, սակայն դա թող լինի առանցքայինը: Երբ հաղորդում եք վարում, մի վախեցեք աչք գցել ձեր գրառումներին, այլապես խոսքը խառնիխուռն կստացվի եւ հաղորդումից հետո ցավով կնկատեք, որ չեք ասել ամենակարեւոր միտքը, չեք տվել ամենաանհրաժեշտ հարցը: Շուտասելուկը լավ է ամենատարբեր շուռների դեպքում, սակայն լուրջ հաղորդման ժամանակ արագ ընթերցված տեղեկատվությունը դժվար է ընկալվում:

Եթե գրուցակիցը ձեր ընդդիմախոսն է, խուսափեք հարձակողական ոճից, բորբոքված շեշտադրումներից, քանի որ դրանով նրա ուշադրությունը ձեր բառերից կտեղափոխվի ձեր վերաբերմունքի վրա: Ալեքսանդր Պանասյուկը «Ինչպես հաղթել բանավեճում կամ համոզելու արվեստը» գրքում ուշադրության շեղումը ներկայացնում է իբրեւ պաշտպանական ռեակցիա, որ շրջափակում է ուղեղի վերլուծական ունակությունը: Նման դեպքերի համար նա խորհուրդ է տալիս կիրառել հռետորական հոգեբանության տեսակետից հրաշալի մի արտահայտություն. «Եթե դուք ավելի հանգիստ խոսեք, ես ձեզ ավելի լավ կհասկանամ»: Ի դեպ, այդ արտահայտությունը պահեք ձեր զինանոցում եւ օգտագործեք միշտ, երբ ձեզ հետ բարձր տոնով են խոսում: Անգամ եթե խոսողը ձեր ղեկավարն է:

Սակայն եթե նույնիսկ ձեր գրուցակիցը, ընդդիմախոսը, լսարանը հասկանում են ձեզ, չի նշանակում, թե համաձայն են ձեզ հետ: Հետեւաբար՝ համոզելու ռազմավարությունը հասկացված լինելու վրա կառուցելը հղի է սխալվելու վտանգով: Քանզի կարելի է հասկանալ եւ... անել հակառակը: Անհրաժեշտ է, որ լսարանը ոչ միայն հասկանա, այլև ընդունի, յուրացնի ձեր տեսակետը: Լսարանին իրենց տեսակետին հանգեցնելու,

այսինքն՝ իրենց քարոզչական նպատակների համար ՁԼՄ-ներն ազդում են հոգեկանի պատճառաբանված գործոնների վրա, այսինքն դիմում են այն արժեքների համակարգին, որով իրենց վարքում առաջնորդվում է այս կամ այն լսարանի մեծամասնությունը:

Դիտարկենք խոսողի (գրողի) ասելիքի եւ ունկնդրի (ընթերցողի) հասկանալու ու դիրքորոշումն ընդունելու միջեւ հարաբերակցության հնարավոր տարբերակները.

- ամեն ինչ հասկացավ եւ ընդունեց,
  - ոչինչ չհասկացավ եւ չընդունեց,
  - ամեն ինչ հասկացավ, բայց չընդունեց,
  - չհասկացավ, բայց ընդունեց:
- Ինչից է կախված ընդունելուն հասնելը.

1. կարողացա՞ք, արդյոք, հասկանալի լեզվով ձեր գաղափարները հասցնել լսարանին (լեզու ասելով նկատի ունենք նաեւ պատկերավորման միջոցներն ու տեսաշարերը),

2. ապացուցել ձեր գաղափարների նշանակալիությունը,

3. շահել լսարանի համակրանքը (անունը, հեղինակությունը, ազնվությունը, սկզբունքայնությունը, վարկը եւ այլ անձնական հայտանիշներ ինքնին վստահություն են ներշնչում): Հոգեբանության լեզվով դա կոչվում է հասնել ատրակցիայի:

Սակայն միշտ չէ, որ այդ երեք բաղկացուցիչների առկայությունը հնարավորություն է տալիս ապացուցել լսարանին սեփական իրավացիությունը: Վերջինի համար պետք է զինված լինեք փաստարկներով: Ընդսմին, փաստարկը տեղեկություններն ընդունողի տեսակետից պետք է.

- 1. համապատասխանի իրականությանը,
- 2. տրամաբանական կապ ունենա ձեր գաղափարի (թեզիսի) հետ,
- 3. չհակասի ձեւական տրամաբանության օրենքներին,
- 4. չհակասի հոգեբանության օրենքներին:

Սակայն, ինչպես հայտնի է, մարդիկ հաճախ գործում են ոչ թե համաձայն տրամաբանության, այլ դրան հակառակ: Եթե դուք, ասենք, որոշել եք նոր հագուստ գնել, սակայն ձեր փողը չի բավականացնում, ապա փորձում եք ինքներդ ձեզ մխիթարել նրանով, թե կարծես այդ հագուստի կարիքն այնքան էլ չէիք զգում, թե փող խնայեցիք եւ այլն: Դա ձեր ենթագիտակցական հոգեբանական պաշտպանությունն է, որ հոգեբանության մեջ անվանում են ռացիոնալ բացատրություն կամ ռացիոնալացում: Այս պատճառով, երբ դիմում եք ձեր իրավացիությունն ապացուցող փաստարկումների, պետք է հաշվի առնեք տեղեկատվությունն ընդունողի անձնական շահագրգռվածությունն ու նրա արժեքային համակարգի առանձնահատկությունները: Եթե նրա արժեքային համակարգում կան բաներ, որ շրջափակում են ձեր փաստարկն ընդունելը, ապա ավելի լավ է այդ փաստարկը չբերել:

Փաստարկները ներկայացնելու հերթականությունն էլ խիստ կարեւոր է:

Եթե դուք չզիտեք, թե ինչպիսին է լսարանի, ընթերցողի, ունկնդրի մեկնարկային կողմնորոշումը, ապա ուժեղ փաստարկներն օգտագործեք սկզբում եւ վերջում:

Եթե մեկնարկային կողմնորոշումը դրական է (ձեր հանդեպ), սկսեք թույլ փաստարկներից եւ ավարտեք ուժեղներով:

Եթե մեկնարկային կողմնորոշումը բացասական է (ձեր հանդեպ), սկսեք ուժեղ փաստարկներից, իսկ ավարտել կարող եք թույլերով:

Այս կանոնները վերաբերում են նաեւ նյութը կառուցելու սկզբունքներին: Ցանկացած լրագրողական նյութ ունի սկիզբ, միջնամաս ու ավարտ: Հիանալի կլինի, եթե կարողանաք նյութը կառուցել մեկ շնչով: Սակայն, ասենք, հարցազրույցի դեպքում հնարավոր չէ ամբողջ ընթացքում պահպանել լարվածության նույն աստիճանը: Այդ պատճառով ընտրեք որեւէ անկաշկանդ սկիզբ, իսկ ամենահետաքրքիր հարցը պահեք հաղորդման վերջի համար: Չէ՞ որ հենց ավարտն է մարդկանց հիշողության մեջ ամենից երկար ու վառ մնում:

Սակայն... Լինում են իրավիճակներ, երբ թե ձեր փաստարկները, թե ձեր հմայքը, թե ձեր խելքը չեն համոզում ունկնդրին, քանի որ նա ինքն է շրջափակում ամեն մի փաստարկում:

Ինչպե՞ս վարվել նման դեպքերում: Պարզվում է, կարելի է մարդու վրա հոգեբանական ազդեցություն թողնել՝ ենթագիտակցականի մակարդակով խաղալով նրա վարքի վրա: Մենք դա համարյա ամեն օր մեխանիկորեն անում ենք, երբ ասում ենք «բարեւ», «շնորհակալություն»՝ անծանոթ մարդու, զրուցակցի բարեհաճությունը շահելով:

## Ի ՍԿՋԲԱՆԵ ԷՐ ԲԱՆՆ

Ի՞նչ էք կարծում, որ բառն է ամենահաճելին առանց բացառության բոլոր մարդկանց համար: Պարզվում է՝ սեփական անունը: Քանզի բարձրաձայն արտասանելով մարդու անունը, մենք ուշադրության ենք արժանացնում նրա անձը եւ դրանով բավարարում ենք իրեն անհատականություն զգալու նրա պահանջունը: Իսկ ցանկացած պահանջունքի բավարարում մարդու մոտ դրական հույզեր է առաջացնում: Նշանակում է, մարդուն անունով կոչելով, մենք շահում ենք նրա համակրանքը: Հոգեբանության լեզվով դա կոչվում է «ատրակցիա (համակրանք) ձեւավորել»: Սակայն բազմազան տեղեկատվությամբ ծանրաբեռնված մեր ուղեղները չեն կարող մտապահել այն բոլոր մարդկանց անունները, ուն հետ գործ է ունենում լրագրողը: Ահա անունները հիշելու մի քանի հնարքներ. ծանոթության սկզբում, մի քանի հերթապահ արտահայտություններ փոխանակելու ընթացքում անունը սեպեք ձեր հիշողության մեջ՝ մինչ գրասեղանին հասնելը, իսկ հետո անմիջապես նոթատետրում կամ ձեռքն ընկած առաջին իսկ թղթի կտորի վրա գրառեք այն: Դուք արդեն կհիշեք այն, նախապես երեք-չորս անգամ կրկնելով: Մյուս հնարքը՝ նույնականացումը որեւէ հայտնի անձնավորության հետ. Նինա, ուրեմն Ջարեջնայա, Անահիտ՝ աստվածուհի, Շոթա՝ Ռուսթավելի եւ այլն: Եթե մարդն ունի հազվագյուտ անուն, մի ամաչեք՝ պնդեք, որ նա իր ձեռքով գրի այն, ընդամին՝ ասեք, որ դա նյութում սխալներ թույլ չտալու համար է:

Սեփական անունից բացի մարդկանց դուր են գալիս նաեւ այլ հասկանալի բառեր, հատկապես՝ հաճոյախոսությունները: Սակայն մի չարաշահեք դրանք, այլապես հակառակ արդյունքի կհասնեք: Մեր խմբագրությունում նոր աշխատակից էին ընդունել: Նա ձգտում էր բոլորին դուր գալ, սակայն դա անում էր շատ անշնորհք ձեւով: Այսպես, ամեն առավոտ նա իր հետ միեւնույն սենյակում աշխատող կնոջ հագուստն էր գովում, մի օր ասելով «ինչ հրաշալի սպիտակ շրջագգեստ է», հաջորդ օրը՝ «ինչ հրաշալի կարմիր զգեստ է», երրորդ օրը՝ «դեղին»... Այնքան հոգնեցրեց, որ այդ աշխատակցուհին հատուկ հագավ խայտաբղետ մի զգեստ ու առավոտյան այդ տղային առաջինն ասաց. «Դե ինչ, այսօր թվարկելո՞ւ ես հագուստիս բոլոր գույներն ու երանգները»:

Եվ այսպես, մի հաճոյախոսեք նրանց, ովքեր ի սկզբանե բացասաբար են վերաբերվում դրան:

Մի արեք երկիմաստ հաճոյախոսություններ:

Մի չափազանցրեք:

Մի բարոյախոսեք:

Մի կարաս գինուն մի գդալ քացախ մի խառնեք (խոսակցական լեզվով ասած՝ «համը մի հանեք»):

Եվ էլի մի բան՝ հաճոյախոսության բովանդակությունը չպետք է հակասի այն իրավիճակի էությանը, որում գտնվում է զրուցակիցը:

## ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ԼԵՁՈՒ

Բացի ձայնային ազդակներից, մեր զրուցակիցների եւ լսարանի ենթագիտակցության վրա ազդում են նաեւ կինետիկ (ոչ բանավոր) ազդանշանները՝ շարժումները, ձեռքերի, ոտքերի, գլխի, իրանի դիրքը: Դա զրուցակցին հաղորդվում է ակամա, եւ վերջինս էլ այն ընկալում է ենթագիտակցորեն:

Մարդկանց մոտ ամենից բացասական զուգորդումներից մեկն առաջացնում է այսպես կոչված ագրեսորի գլուխը. ծնուդը՝ մինչեւ կուրծքը կախ, հայացքը՝ հոնքերի տակից: Կոկորդը մարդու մարմնի ամենախոցելի տեղերից է, եւ երբ մարդը բնազդորեն թաքցնում է այն ծնուտի տակ՝ ասես ագրեսիվ-պաշտպանողական դիրք է բռնում: Սովորաբար նման (ագրեսորի գլխով) մարդիկ նորմալ միջավայրում իրենց հարմարավետ չեն զգում: Նրանց համար հարմարավետը ագրեսիվ միջավայրն է:

Տիրակալի գլուխը՝ մարդկանց գիտակցության մեջ նույնացվում է մեծամտությանը, արհամարհանքին, գերակայությանը: Այն եւս լսարանին իր նկատմամբ բարեհաճություն չի ներշնչում: Տիրակալը գլուխը հետ է պահում, վիզը բաց է, հայացքը՝ վերից վար:

Ամենից դրական հույզեր առաջացնում է անսացողի գլուխը, ես այն կանվանեի Պոզների գլուխ. մի փոքր կողքի թեքված եւ մի փոքր ցած՝ ուշադիր ինչ-որ բան ունկնդրող:

Նախագահի գլուխ. անսացողի գլխի եւ տիրակալի գլխի միջինն է, այսինքն՝ մի քիչ կողք է թեքված եւ մի քիչ հետ զցած: Գորբաչովի նախընտրած գլխի դիրքն է: Իր մեջ ներառում է եւ զրուցակցի նկատմամբ ուշադրությունը, եւ սեփական արժանապատվության զգացումը:

Եթե ցանկանում եք լսարանին ինչ-որ բան հանդգել՝ նախագահի գլուխ ցուցադրեք, իսկ եթե զրույց եք վարում՝ անսացողի գլուխ:

Լսարանի համար պակաս կարելուր նշանակություն չունի նաեւ ձեռքերի դիրքը: Կրծքին խաչած ձեռքերն անվանում են «առջեւի մեծ կողպեք», կամ «Նապոլեոնի դիրք»: Դա շրջապատից մեկուսացվածության նշան է:

Ափով դեպի ներքեւ շարժումը ճնշում է, լռության է կոչում, վստահության բացակայություն է ցուցադրում: Ջրուցակցին մեկնված ափը դեպի վեր ձեռքն, ընդհակառակը, խրախուսում է, քաջալերում:

## ԻՆՉՊԵՍ ՆԱԽԱԳԱՅ ԴԱՌՆԱԼ

Ի՞նչ եք, կարծում, ու՞մ ենք մենք նախագահ ընտրում: Առասպելը: ՋԼՄ-ների ստեղծած առասպելն ենք ընտրում: Եթե նախկինում նախագահի թեկնածուները, անմիջականորեն շփվելով իրենց ընտրողների հետ, նախընտրական ծրագրին զուգահեռ մեջտեղ էին հանում նաեւ իրենց հռետորական տաղանդն ու արտաքին գրավչությունը, ապա ժամանակակից քաղաքական գործիչները դարձել են հեռուստատեսային գործիչներ: ՋԼՄ-ների հոգեբանության վերաբերյալ ժամանակակից ամերիկյան գրականության մեջ (Ռիչարդ Յարիս, «Ջանգվածային հաղորդակցության հոգեբանություն») օգտագործվում է անգամ արդյունավետ հեռուստատեսային քաղաքական գործիչ հասկացությունը: Ամերիկայում այդպիսիք են համարվում Ջոն Քենեդին, Ռոնալդ Ռեյգանն՝ իր դերասանական անցած ուղիով եւ Բիլ Քլինթոնը: Ջորջ Բուշին եւ Ռիչարդ Նիքսոնին, ընդհակառակը, քննադատել են հեռուստատեսությունն արդյունավետ չօգտագործելու համար:

Հեռուստատեսությունը մի մեծ լսարանում է հավաքում՝ ամենատարբեր քաղաքական հայացքների տեր մարդկանց, եւ այդ խայտաբղետ լսարանի առջեւ հանդես գալով, նախագահի թեկնածուն իր ճառը կառուցում է այնպես, որ տեղ հատկացնի եւ աղետի գոտում բնակվող մարդկանց, եւ միջին ձեռնարկատերերի խավին, եւ երիտասարդությանը, եւ բնակչության մյուս շերտերին՝ յուրաքանչյուրին իր ուզածը

սկզբունքով: Մի անգգույշ արտահայտությունը կարող է առ ոչինչ դարձնել անգամ ամենաուժեղ նախընտրական ծրագիրը: Հիշենք մի օրինակ մեր պատմությունից: Տեր-Պետրոսյանի իշխանության տարիների ցուրտ ու սոված ձմեռները մենք հակված ենք այժմ մեկնաբանել շրջափակմամբ, սակայն երբեք չենք մոռանա իրարից պարտք վերցնելու նրա անգգույշ խորհուրդը:

Անձնական շփումների եւ հրապարակային ելույթների լեզուներն իրարից տարբերվում են: Որոշ կատակներ տեղին են խնջույքում, բայց ոչ երբեք հրապարակային ելույթի համար: Մասնավոր կյանքի հրապարակված մանրամասները կարող են ավելի շատ վնասել մարդուն, քան անգամ մասնագիտական թերացումները: Էլեկտրոնային ՁԼՄ-ների լայն տարածումը գործնականում խորտակել է մասնավոր ու հրապարակային կյանքի միջեւ եղած անջրպետը՝ եւ մեկը, եւ մյուսը դարձնելով հասարակությանը տեսանելի: Դա ակնհայտ դարձավ արդեն 1998 թվականին, երբ բորբոքվեց Մոնիկա Լեւինսկու հետ կապված հայտնի սկանդալը:

Որպես կանոն քաղաքականության ասպարեզ են մտնում ինքնագոհ, սեփական հաջողություններին վստահ մարդիկ: Առավել եւս, որ նրանց իմիջը ստեղծելու համար աշխատում է մասնագետների (նեյրո-լեզվագիտական հոգեբաններից մինչեւ վարսահարդարներ) մի ողջ խումբ: Այս պատճառով, նրանցից յուրաքանչյուրը համոզված է, թե լրատվամիջոցներն էլ կոչված են ծառայելու իրեն՝ հեռուստադիտողների, ունկնդիրների ու ընթերցողների բարեհաճությունը հրավիրելով իրենց անձի ու անհատականության վրա: Սակայն, առաջ անցնելով, ասենք, որ հեռուստատեսությունն օժտված է մարդու իսկական էությունը բացահայտելու ընդունակությամբ: Ինչը մենք տեսնում ենք մեր հայրենական էկրանում՝ ի դեմս ԱԼՄ հեռուստաընկերության անխոնջ ղեկավարի:

Եվ այսպես. մեր երկրում լրագրությունը չափազանց քաղաքականացված է: Քաղաքական կարեւորագույն իրադարձություններից մեկը, որին մեր ՁԼՄ-ներն ամենից շատ են ուշադրություն դարձնում, անկասկած, ընտրարշավն է: Նախընտրական արշավների ընթացքում առաջին հերթին ուշադրության կենտրոնում են լինում թեկնածուներն ու նրանց կուսակցությունները: Արեւմուտքում կարեւորությամբ երկրորդը այսպես կոչված «լվերի որսն» է: Այսինքն՝ նախընտրական արշավի ժամանակ թույլ տրված ամեն մի կոպիտ սխալ կարող է հրապարակվել եւ ճակատագրական դառնալ: Օրինակ, 1987 թվականին ԱՄՆ-ի նախագահի թեկնածու Հարի խարտը ամբողջ երեկո սիրահետում էր ֆոտոմոդել Դոննա Ռեյսին եւ կատակով հրավիրում լրագրողներին հետեւել իր օրինակին: Լրագրողներն էլ նրա արկածները տարածեցին ՁԼՄ-ներով: Դա բավական էր, որ խարտը դուրս մնա նախընտրական պայքարից: Խոսքի անկատարությունը, սխալները նույնպես բացասաբար են ազդում հեղինակության վրա: Թեպետ մեզանում դրանց չգիտես ինչու ուշադրություն չեն դարձնում: Քաղաքական գործիչների վարկը նշանակալիորեն իջեցնում են նաեւ վիրավորական, կոպիտ արտահայտությունները, ինչը, ցավոք, նույնպես հազվադեպ չէ մեր հեռուստատեսությունում:

Երրորդ գործոնը, այսպես ասենք՝ «մասսովկա» բեմադրելն է: Շատ երկրներում օգտագործում են այդ, օրենքի տեսակետից խիստ կասկածելի հնարքը. մարդկանց վճարում են, որպեսզի վերջիններս կամ բողոքող, կամ աջակցություն հայտնող (նայած թե թեկնածուի կամ տեղի ունեցող իրադարձության նկատմամբ հեռուստադիտողի մոտ ինչ տպավորություն է պետք ստեղծել) մարդկանց խումբ ներկայացնեն: Հիշենք Մոսկվայում մշակույթի տունը գրաված չեչեն ահաբեկիչների պահանջներից մեկը. կազմակերպել հանուն Չեչնիայի պաշտպանության բողոքի ցույց: Հիշենք մեր իրականությունից վերջին դեպքերը. երբ ընդդիմության միտինգներին մարդիկ էին ուղարկվում՝ ձվեր նետելու հռետորների վրա:

Չորրորդ գործոնը՝ նշանավոր մարդկանց հետ թեկնածուների հանդիպումների լուսաբանումն է: Մեզ մոտ դրանք հիմնականում մտավորականության ներկայացուցիչների հետ հանդիպումներն են: Այլ երկրներում, միջազգային քաղաքականության փորձ չունեցող թեկնածուները այլցելություններ են կատարում

արտասահմանյան պետությունների ղեկավարներին, որպեսզի նորությունների թողարկումներում ցուցադրեն իրենց փոխադարձ ձեռքսեղմումները:

Սակայն, թերևս, ամենակարևոր գործոնը մամուլում նախընտրական արշավի ամենափոքր մանրամասների լուսաբանելու կերպն է:

Շատ հաճախ, բարդ խնդիրներ լուսաբանելիս, թղթակիցները խեղաթյուրում են իրականությունը՝ երբեմն միտումնավոր, երբեմն՝ պարզապես չըմբռնելով հարցի էությունը:

Նախագահների եւ նախագահության թեկնածուների անձնական կյանքի լուսաբանումը լայն տարածում է ստացել միայն վերջին տասնամյակներում:

Ահա մի քանի օրինակներ: Հասկանալի է՝ արտասահմանյան մամուլից: Ֆրանսիայի նախկին նախագահ Ֆրանսուա Միտերանի թաղմանը ներկա էին նրա կինը եւ երկարամյա սիրուհին, ինչպես նաեւ՝ այդ երկուսի երեխաները: Ամբողջ Ամերիկյան գիտեր, որ Ջոն Քենեդին եւ Լինդոն Ջոնսոնը սիրուհիներ ունեն, սակայն այնպիսի աղմուկ, ինչպիսին բարձրացավ Սոնիկա Լեւինսկու եւ Բիլ Զլինթոնի հարաբերությունների շուրջ, ավելի վաղ տարիների հրապարակումներում չէր եղել: Սիրուհիներ ունեին եւ Ուորեն Հարդինգը (1913 - 1921), եւ Ֆրանկլին Ռուզվելտը (1936 - 1945), սակայն նրանք մամուլում ներկայացվել են իբրեւ իրենց կանանց նվիրված հավատարիմ ամուսիններ: Վուդրո Վիլսոնը (1913 - 1921), այրիանալով, ամուսնացավ իր վաղեմի սիրուհու՝ Էդիտ Բոլինգի հետ: Վերջինս փաստացի ղեկավարում էր երկիրը, երբ Վիլսոնը ֆիզիկապես անգործունակ էր: Հասարակությունը նույնիսկ չէր էլ կասկածում, որ նրա ամուսինը ծանր հիվանդ է:

ԱՄՆ-ի 15-րդ նախագահ Ջեյմս Բյուկենենը (1857-1861), կենակցում էր Ալաբամայից մի սենատորի հետ: Նրա հարսնացուն՝ Էնն Քոուլը, իմանալով այդ մասին, ինքնասպանություն գործեց: Համասեռամուլական կապեր ուներ նաեւ Ջեյմս Հավիլը, ով նախագահ եղավ ընդամենը մի քանի ամիս. նրան սպանեցին:

Մեզանում ընդունված չէ գրել նախագահության թեկնածուների, առավել եւս՝ նախագահների անձնական կյանքի մասին: Ի՞նչ իմանաս, ում օգտին կքվեարկեն ընտրողները, եթե շատ բան իմանան իրենց ընտրյալների մասին:

## ՄԵՐ ԽՈՍՔԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

1964-1975 թթ Ամերիկայի Միացյալ Նահանգները պատերազմ էր մղում Վիետնամում: Կառավարությունն ու զինվորականները համարում են, որ պատերազմում պարտվելը մեծապես պայմանավորված էր մամուլում չվերահսկվող լուսաբանմամբ: Եթե մամուլն ընդունակ է ազդելու պատերազմի ելքի վրա, ապա պատկերացրեք, թե ինչ զորություն ունի նա առօրյա կյանքում՝ բազմաթիվ մարդկանց գիտակցության վրա ազդելով: Որպեսզի լրագրողի խոսքը սերմանի ոչ թե լրատվական ամենատարբեր տրամաչափի միջոցներից աներեսորեն մեր կյանքի ոլորտները խցկվող «չարի չափանիշները», ապա ձեռքը վերցնելով գրիչ կամ խոսափող, պետք է անպայման հիշել լրագրողական մասնագիտության եւս մի պատվիրան. «Մի վնասիր»:

## Օգտագործված գրականություն

1. Էրիկ Ֆիլսթելիուս, «Լրագրության 10 ոսկե պատվիրան», «Ինտերնյուսի» մատենաշար, Երեւան, 2001
2. Александр Панасюк, “Как победить в споре, или искусство убеждать”. М., “Олимп” АСТ, 1998
3. “Основы репортерства”. Изд-во “БАГ”,

Promedia/Irex, Ереван,

4. Алан Розенталь. "Создание кино и видеофильмов как увлекательный бизнес", М., изд-во "Пульс", 2001
5. "Средства массовой информации в Британии", Министерство иностранных дел и по делам Содружества, Москва, 2002
6. Ричард Харрис, "Психология массовых коммуникаций". С-Пб, "Прайм-ЕВРОЗНАК", НЕВА", М., "ОЛМА-ПРЕСС", 2002 "Издательский дом профессионалов.
7. Почепцов Г. Г. Паблик Рилейшнз для "Рефл-бук" "Ваклер" Москва - Киев. 2000.
8. Джон Кехо. Подсознание может все. Попурии. Минск. 2004.
9. Психология и этика делового общения. Учебник. 2003. Юнити. Москва.